

ԱՐՄԱՏ

ամսագիր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ ԺԲ. ԱՊՐԻԼ **1870** Բ. ՏԱՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԶՀԱՅՏԱՏՈՒԹԵՆԷ ՀՈՌՈՄՈՍԻՆ ՎԱՆԱՑ Ի ՇԻՐԱԿ.

(Շար.-նախ.-ին և վերջ։)

Ընդանաքրո-ւին-ն՞ եղեալ ընդ ձեզ աղէկ
կամաքացն որ ի նէրս կո-ատմոխ պանէացն,
յորս վերայ է փոխէլ գմբէլն պանգակաց։

ի Ցակոբ արեւելեան կամարին

Ի թուիս ՈՀԲ. կամաւ Ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակիս հիճուկ Գրիգորոյ որդւոյ Հասանայ և եղբօրորդեաց իմոց տէրանց սուրբ ուխտիս վանացս Հոռոմոսի, որ Հաստատեցաք արձանագրով լի ի յայս տեղւոյս. ի յարանց կամ ի կանանց ոմ կաշառով հայր դնէ, այնպիսին նզովք առցէ զյուզայի զԱստուածածնամաճառին, և զկայենին զեղբայրասպանին։ Եւ հայր և այլ գործաւոր որք կաշառս տան յայնի կամ ծածուկ, յերկնաւոր հաւրէն, ՁԾԸ։ Հայրապետացն և յաւմենայն սրբոց անիծեալ եղիցի ի հոգի և ի մարմին։ Եւ հայր որ ի վանիցս հաց ծախէ, կամ ի վանիցս ի բաց խորէ, նզովեալ եղիցի մահով և կենով։ Ո՛վ հակառակ կայ այս բանիս, ի պատրոնաց կամ ի միաբանից, կամի և ջնջել զայս գիրս, և ինքն ջնջեսցի ի դպրութենէն կե-

նաց. կատարիչքն աւրհնեալ եղեցին յԱստուծոյ։ Խոցափող գրիչ մի էր"։

Ի ներքոյ սորին յԱջակողմեան ծայրին.

"Ո՛Ծ. կամաւն Աստուծոյ ես խաչեղբայր և իմ որդին Աւետիս միաբանեցաք սուրբ Ուխտիս. և տուաք զմեր հայրենիքն զմնարանց մարգիկանգ ի վանքս, սպասաւորք սորա կատարեն ի տարին Զ. աւր ժամ. Բ. ինձ. Բ. Աւետիսին. Ա. Սկատին. Ա. եղբարցն ի տաւնի Աւետեացն"։

Ի վերայ նոյն կամարին ի ծախակողմանն։

"Ես Սարգիս Երէց որդի Պետրոսի փարպեցի՝ և տու զիմ գանձագին այգին ի վանս Հոռոմոսին յիշատակ ինձ և ծնողաց իմոց. Սպասաւորք սըրբոցս կատարեն յամենայն ամի զտաւն սուրբ Սարգսին պատարագել զքրիստոս. Բ. ժամ. Ա. ինձ և. Ա. կենակցին իմոյ Քեամէին։ Ի թուիս ՉԾԵ. կամաւն Աստուծոյ ես Աքէրսանս որդի ղազարի միաբանեցայ"։

Ի ճակատ հիւսիսային կամարին.

"Թուին ՈՆԳ. Ընորհիւն Քրիստոսի ես Զամրուխտ խաթունս աղախին Քրիստոսի յուսալով յողորմութիւնն Աստուծոյ եւու սուրբ Ուխտիս ի վանքս Հոռոմոսի ի սուրբ Յովհաննէս ակն մի ջաղաց բոլոր ի կամրջի ձորին որ Արէքեանց կոչի. զոր այն իմ աստուածասէրն Սմբատ յետ կենդանութեան ինձ հայրենիք էր տուեալ. ես իմ կենդանութեանս սուրբ Ուխտիս հայրենիք հաստատեցի յաւաջնորդութեան Տեառն Բարսղի Ամիրերկաթոյ։ Եւ սպասաւորք սուրբ ուխտիս փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի պատարագել զքրիստոս Խե. աւր։ Ժե. ինձ խաթունիս. Ժե. առն իմոյ Սմբատայ. Ժ. մաւրն իմոյ Խորիշանի. և ե. իւր հաւրն Քրդին։ Արդ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց ղմեր նուէրս հանէ ի սուրբ ուխտէս, կամ ծախելով կամ գրաւական դնելով, կամ յամն պակասեցուցանէ, ՑԺԼ. հայրապետացն նզովեալ եղեցի մահով և կենաւք. իսկ հաստատուն պահողքն աւրհնին յԱստուծոյ"։

յԱրեւելեան կամարին,

"Ի թուին ՈՒՊ. յաւաջին ամի կաթուղիկոսութեան տեառն Բարսղի և ի տէրութեան վանացս Գրիգորոյ և Սմբատայ և եղբարց իւրեանց որոց օգնական լեցի Քրիստոս Աստուած, շնորհիւն Աստուծոյ ես նուաստ Հայրապետս սուրբ Ուխտիս հաստատեցաք, թէ ոք ի սուրբ վանացս փոխի ի քրիստոս, պատարագ մատուսցուք յաւրն Գ. քառասուն, երիցուն՝ Բ. քառասուն. Աբեղայի՝ Գ. քառասուն. և ամենայն եղբայր միաբան պատարագ մատուսցէ. և որ չկարէ. Ժ. կանոն ապաշխարեսցէ. եթէ ոք յայս կարգելոցս պակասեցուսցէ, խղճի և մեղաց պարտական է առաջի Աստուծոյ. զաշխարհական Աբեղայի Ե. քառասուն. տէր ողորմեա յովհաննէսիս"։

Կից սմին ի նորքուստ,

"Ես Շուշիկ զուգակից Խոսրովու եւու զիմ տրանէրն ի սուրբ Յովհաննէս. և առի ինձ պատարագ ի տարին աւր մի, կատարուցքն աւրհնին ի քրիստոսէ"։

Ի ներքոյ սորին գարձեալ

"Ես Խարդուղիմէոս Արեղայ Փարպեցի եւու զիմ գանձագին այգին որ ի փարպի, և վանացս ի հիւրատուն. և նորա հատուցին ինձ պատարագ ի տարին աւր մի"։

Կից այսմ գարձեալ։

"Կամաւն Աստուծոյ ես Քոթիլէ ձոնս և կենակիցն իմ Շահմամայ՝ տուաք զուտանկն իւր հողովն և ջրով, ունց բնական լեալ է. ի սուրբ Յովհաննէս, և ի շինած տներս ի սուրբ Յովհաննէս։ և սպասաւորք սորա հատուցին մեզ քոթիլիս երկու պատարագ. Ա. ինձ. և Ա. Շահմամին։ եթէ ոք ի մերոց կամ յաւտարացն . . . ի կենացն աստուծոյ. կատարիչք աւրհնին ի քրիստոսէ"։

Գարձեալ կից սմին։

"Ես իգնատիոս որդի . . . տուաք զմեր հայրենիք կէս գանկն ի մարաց մարգին ի սուրբ Յովհաննէս . . . պատարագ ի տարին՝ Բ. աւրն ինձ. և Ա. մամերուն. եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց, խափանէ . . ."

Ի վերայ կամարի լուսամուին արեւմտեան դրան ժամանակն արտարուստ։

"Ի Ո՛Ծ. թվիս շնորհիւն Աստուծոյ ես Գրիգոր որդի Հասանայ որդւոյ Իշխանի՝ եւու զիմ գանձագին գիւղն Գաղրա ի մեր սեպհական ուխտս և գերահռչակ վանքս. Եւ վանն յիշատակի հոգւոյ իմոյ և ամուսնոյ իմոյ Խաթունին. յաւաջնորդութեան Մխիթարայ. պարտական են սպասաւորք Հոռոմոսին վանացս մինչ ի գալուստն Քրիստոսի

յամենայն ամի մեկ Ի. պատարագ առնել. Ի. ինձ Գրիգորոյ. և Ի. ամուսնոյ իմոյ Խաթունիս: Մարդ մահկանացու որ զմեր յիշատակս խափանէ, մեղաց մերոց պարտական է առաջի սոսկալի բեմին Քրիստոսի. կատարիչքն աւրհնեսցին ի քրիստոսէ":

Յորմն հարաւային սուրբ ինձեր վերի լուսամուին:

"Շնորհիւն Քրիստոսի ես Գրիգոր որդի Բախտիարին հատու ընծայ ի սուրբ Ցովհաննէս Ք. տուն. և ի վերին Գ. Կուղպակ, զոր իմ հալալ արդեամբք շինել եմ. յիշատակ ինձ և զաւակի իմոյ Աւագ խաթունին. և սպասաւորքս փոխարէն հատուցին յամենայն ամի Գ. աւր պատարագ Ա. ինձ և Ք. Աւագ խաթունին":

Ի ներքոյ սորին:

"ՈՒԳ. Թվիս Հայոց, ի հայրապետութեան Նահանգին մերում Տեառն Բարսղի, Ես նուաստ Պետրոս երէց և իմ եղբաւր որդիքս Ղազար, Ծուսիկ և Սիմէօն՝ տուաք զմեր հայրենի պզին որ ի փարպի, որ կոչի խանի կշտին, ի սուրբ եկեղեցիքըս Հոռոմոսի վանացս՝ ի յառաջնորդութեան Խաչատրոյ. Եւ խնդրեմք ի սպասաւորացս սրբոց Ղ. աւր պատարագել զբրիստոս յամենայն ամի զՀոգւոյն գալստեան շաբաթն . . ."

Ի ճակատ դրան ժամատան Հոռոմոսին վանայ դրբեալ ի յետին ժամանակս յետ առաջնոյ աւերանացն:

"Ի ՌՃԼԴ. Թուականութեան Հայոց նորոգեալ պայծառացաւ Թագաւորաշէն մեծաքանչ Հոռոմոսին վանքս ձեռամբ Դանիէլ Վարդապետի Տիգրանակերտցւոյ և յիշխանութեան Խաթունօղլի իշխանաց իշխան Մուստաֆայ աղային. և զի ուր նէր ժամանակս ուշ սակաւ աւերեալ, աղօթով և Հոգով լցեալ, զոր տեսեալ վերոյգրեալ Դանիէլ Վարդապետին, եռաց ի Հոգի իւր, և էարկ զանձն ի չարչարանս ի դառն ժամանակիս, յորում, ազգս Հայոց յոյժ կին չքաւորեալք. և իշխանութեամբ և ջանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս սուրբ Ցովհաննիսի ի տղմուտ և ի զազիր մեթաղգածութենէն վասն յուսոյն որ առ Աստուած: Արդ որք կարդաք, յիշեցէք ի Քրիստոս՝

Զ.

Հոռոմոսին վանք:

Հոռոմոսին կոչեցեալ վանք, որոյ անուանագրութիւն ըստ բանից պատմագրաց մերոց որ ի տեղեկութեան պատմութեան այսր վանացս Ա. յօդուածի անդ սկսեալ է յերիցանց Հոռոմոցն ի տասներորդ դարու եկեղցին ի Շիրակ, է կարի հոյակապ կառուցեալ քառակուսի՝ ի վերայ երկոտասան սեանց, ուրմէից եղելոց յորմունս, որք եռակարգ և անկիւնաւոր միապաղաղ քարինք զրուագաւոր խարսխօք. երկու երկու ի չորեսին որմունսն. իսկ չորք են ի միջակիտին ապառաժ և կապտագոյն քարինք են հանդերձ վերնախարսխօք և միապաղաղ նոյնպէս ներքնախարսխօք, այլ որոշք ի բոլորշի սեանցն:

Առաջին երկու սիւնք միջակիտին՝ են ուղղանկիւն. և երկու վերջինքն բոլորշի. յորոց վերայ գոլով չորեքին սրանկիւն և նուրբ կամարք, հաստատեալ է ի գլուխ այնոցիկ քառանկիւնաւոր լուսամուտն կամ կիսագմբէթն. որ յար և նման ժամատանն Հառիճոյ. հրաշալի քանդակագործութեամբ ի խորշս խորշս ամբարձեալ ի վեր, քաղեղով փոքրկացուցեալ է և աւարտեալ ի ձև քառակուսի և թողեալ լուսամուտ փոխանակ զրմբ բեթի:

Իսկ կամարայարկ չորից կողմանց սեանցս, է որ հարթ հաւասար է, և է որ անկիւնաւոր հաստատեալ. բայց անզրուագ քարամբք կերտեալ. յաբևելեան որմն է փոքրիկ ծոցաւոր սեղան պատարագի. իսկ շինուած այսր վանաց գոլով քառակուսի, լայնութիւն և երկայնութիւնն են միաչափ քայլ քսաներկու:

Ի չորից սեանցն իջանեն կամարքն ի չորից ևս կուսէ ի վերնախարիսխս որմասեանցն, որք բառնան զտանիս եկեղեցւոյս. գուռն մի միայն ունելով յարևմտից. ընդ որ կանեն ի փոքրիկ ժամատուն նորա, զորմէ ի ներքոյ. և անտի ի հիւսիսային դրանէն արտաքս:

Ա յս վանք Հոռոմոսին հին քան զամենայն եկեղեցիս մենաստանիս չունի արձան յիշատակի. բայց գոյ Հայկական Թուականս ի վերայ վերնախարսխի հարաւային սեանն առաջնոյ ՄԽ. որ ևրևի թիւ շինութեան նորին, որով մնայր է զշինութիւն Հոռոմոսին վանաց հաւաստել ճիշդ լեալ յոթերորդ դարու ըստ բանի պատմագրաց. յորում հալածեալ հոռոմ կրօնաւորաց ի հոռոմոց անտի յաւուրս Ռոմանոս կայսեր ի Հայս՝

նորոգեցին զսյն, և ոչ նորոգ կանգնեցին. որով և յանուն նոցա կոչեցաւ Հոռոմոսին վանք:

Զայս վանք Հոռոմոսին առաջին քան զայլ տաճարս անդ, Կարապետ Վարդապետ Առաջնորդ կարուց, որ ետ տպել զարձանագիրս այսր Հոռոմոսին վանից, չկարելով որոշել, սխալմամբ կոչէ փոխոխակի դիւանիանէ և խորհրդարան:

Ի յետին ժամանակս դրոշմեալ են արձանագիր մի յիշատակի ի վերայ կամարի միջին սեան այսորիկ, և է անթուական, որ ունի օրինակ զայս:

"Կամաւն Աստուծոյ ես վարդս և ամուսին իմ Աղբրացս միաբանեցաք ի սուրբ ուխտիս և տուաք Ք. կոյզ և Ք. եզն. և ետուն մեզ գերեզմանի տեղի. և ի տարին Գ. աւր պատարագ. Ք. յինձ. և Ք. Աղբրացին. որչափ կենդանի եմք, մեր ծնողացն առնեն, յետ մահուն մեզ առնեն":

Ա յս եկեղեցի Հոռոմոսին է ի հարաւոյ սրբոյն Յովհաննու, կառուցեալ ի վերայ ապառաժին ամբարձեալ ի հիւսիսային եզը գետոյն հղեալ ի տեղի պարսպի այսր կողմանն, որ ամբողջ մենաստանն ունի ի վերայ իւր:

Ժամագործն Հոռոմոսի վանից:

Ցառաջոյ տաճարի Հոռոմոսին կից արևմտեան թրմոյն նովին լայնութեամբ, ուր բացեալ լինի դուռն նորա որպէս ասացաք, կառուցեալ է քառակուսի փոքրիկ ժամատունն անսիւն ի վերայ չորից կամարաց խաչաձև արկեալ մինչև յորմս սիւնսն. որք են երկու երկու ի չորեսին որմունս եկեղեցւոյն վորուածովք և դրուագաւոր վերնախարսխօք. որոց սիւնք յառաջացեալք են յորմոցն երկու ոտք լայնութեամբ. հիւսիսային և հարաւային որմասիւնքն են քանդակագործ և կարի նուրբ վորուածովք. ի շրջանակս նորա վորագրեալ է Թիւս ՉԻԶ:

Դուռն տաճարիս լեալ է յարևմտից, որ այժմ փակեալ, ընդ հիւսիսային որմն բացեալ դուռն, ընդ որ կանեն ի դստատանատունն ասացեալ նշխարատունն:

Ա յս նշխարատուն է շինուած քառակուսի առանց սեան՝ երկայնութեամբ և լայնութեամբ հաւասար չորս և կէս կանգնոյ. ձեղուն նորա քաղետով գործեալ և դրուագեալ գեղեցիկ մանուածովք ծաղկանց, յորոյ ի միջակիտին Թողեալ լուսամուտ իբրև ժամատանցն:

Զայս նշխարատուն ըստ արձանագրութեան եղեալ ի Ճակատ դրանն, շինեալ է Վաչէ իշխան և Մամախաթուն կին նորա, հիմնարկիչք Ա տուածածնի վանից Ցեղերու Յարագածոտն:

Ցարևելեան որմն այսորիկ դոյ խաչ վէմ մի, երդման խաչ ասացեալ ի ռամկաց տեղոյն:

Արձանագիր շինութեանն է ի վերայ Ճակատու դրանն որ ի հիւսիսոյ, ի վերայ կիսապղպեղակ վիմին որ ի վերայ սեմին՝ ըստ այմ:

"ՈՀԸ. Ընորհիւն Քրիստոսի ես Վաչէ որդի Սարգսի և ամուսին իմ Խաթուն դուստր Ապրապուսեհրի շինեցաք զշնխարատունս ի վանս Հոռոմոսի. Յառաջնորդութեան տեառն Բարսղի որդւոյ Ամիրերկաթոյ. Եւ տուաք ընծայ գրատանս ըղմեր զանձագին այգին ի Յաւշական... ժամու համար և նշխարի. և այլ տուաք եկեղեցւոյս ըսպաք և երկու քշոց ք արծաթի. և վոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն տարի յամենայն եկեղեցիքս ի նոր կիւրակէին պատարագել զՔրիստոս. զայդին փակական հոգւոյ և գինւոյ իշխանութիւն ունի, որ ի մեր պատարագի աւուրն հասարակաց սէր առնէ. արդ կատարիչք գրոյս աւրհնին Յաստուծոյ. խոկ նեձ ի մերոց կամ յաւտարաց ղսիշատակս մեր խափանէ, մեղաց մերոց պարտական լցցի առաջի Աստուծոյ":

Յայլակողմն այսորիկ եւ այս արձանագիր:

"Ձ Հ Ե. Ընորհիւն Քրիստոսի ես Հայր Վահան... եւտու ի սուրբ Յովհաննէս յիշատակ իմ եղբաւրն Գրիգորոյ, որ միջաւրեայ ի Քրիստոս փոխեցաւ. իւր Հալալ... խաչվառ և նասիճ շուրջառ... եւտուն կարկի ղնմայո հղոն և ղծմակի հողն. որ ինձ... ղինչ խարճ լինի՝ ես առնեմ. Հետ այնոր սուրբ Յովհաննիսի է. սպասաւորք փոխարէն հատուցին յամէն ամի Գ. պատարագ. ի տանի սուրբ Գրիգորին՝ յանուն Գրիգորոյ առնել, կատարիչք գրոյս աւրհնին ի Քրիստոսէ ամէն: Շինեցի ղուլէն* և զանգակատունս":

Մենաստան Հոռոմոսին:

Պարիսպ մենաստանին սկսեալ ի հարաւոյ կողմանէ, ուր ելանէ ի ձորն, և ունի ի վերայ իւր զանազան շինուածս, որոց ոմանք ի հիմանց կործանեալ, և ոմանք ի կիսոյ, և ոմանք ի վերայ հասեալ:

*) Այս ղուլէ (աշտարակ) որ է ի ներքս պարսպին կից երկրորդ դրան նորա, է այժմ աւերակ:

մանէ վանացն ի ձորարաշխի անդ Ախուրեան գետոյն, շրջապատի ընդ արևմտեայ և ընդ հիւսիսի կողմանս ղրից նորին, աւարտեալ ընդ արևելս, ուր միաւորեալ է ընդ արևելեայ կողման անկեան եկեղեցւոյն, իսկ արևելեան կողմն վանացս է առանց պարսպի ունելով անդ դերեզմանատուն հասարակաց։

Այս պարիսպ ունի դուռն՝ մի կամարակապ ի հնուց, և խաչ մի ի միջոցի կամարին. յերկուց կուսէ ղրանն արտաքուստ՝ են վեց խաչքարունք գեղեցիկ փորուածովք երես ընդ հիւսիս։

Մերձ յայս դուռն է գիւղ վանացն, յորում են երեք և չորս աղբատին տունք. ի ներքս պարսպին են աւերակք տանց. յորս է կամարակապ հին գոմն անասնոց մնացեալ ի նախնեաց՝ և է այժմ ևս ոչ ևս ևս ևս

Էջմին սեպհական ժողովուրդ այնորիկ նախ քան զՔրիստոսատութիւն երկրին Ռուսաց։

Զառաջնաւ վանացն ի մէջ ձորոյն ի հիւսիսոյ ուր գերեզմանքն են հնոյ ժամանակի, կառուցեալք են երկոքին գեղեցկաշէն տաճարք անուամբ ըզօրա-վարաց Ս. Մինասայ և Ս. Գէորգայ իրրև յանա-պատի. ըզորոց գտեղադրութիւնս չեղև միջոց մեզ առնել։

Ընդ կողմն հարաւային դրան Ս. Մինասայ եկե-ղեցւոյ է գերեզման Աշոտ Թագաւորի, ունելով այսչափ միայն արձանագիր "Աշոտ Թագաւոր հա-յոց"։

Իսկ Տաճար Ս. Գէորգայ կառուցեալ ի Թուին Հայոց ՆԿԱ, ի Գագկայ Շահնշահէ, ունի արձա-նագիր շինութեան արտաքուստ յարևելից ի վե-րայ որմոյ սեղանոյն ըստ այսմ։

"Թիւ. ՆԿԱ. ով հոչակաւոր դու մեծ անուանիդ ի վկայս սուրբ Գէորգեոս, օգնեա բարեխօսութեամբ Գագկայ Շահնշահի շինողի զվկայարանս զայս քո-յով անուանակոչութեամբ, ի քոյդ բարեխօսու-թիւն յուսացեալ. զի ընկալցի ողորմութիւն ի Քրիստոսէ յԱստուծոյ յանվաճառն արքայութեան ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք, հա-սանել լուսոյ փառաց որդւոյն Աստուծոյ ի վերջ-նում դիշերին ի ծագել մեծի և աներեկ առա-ւաւտին, այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմի անաչառ դատաւորին աղաչեմք"։

Զայս տեղագրութիւն արարաք ի վանս անդ Հոռոմոսին յամի 1851, յորժամ յայցելութիւն գնացաք քաղաքամերն Անւոյ. և էր վանահայր վանացն Պետրոս Վարդապետ։

Ընդ Ընթերնողսն

Ա Զ Դ Ա Ց Ի Ն

Մեծաւ ուրախութեամբ և գոհութեամբ կը փու-թամք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց, որ Վ.ԽՀ. Կաթողիկոսը անցեալ փետր. ամսոյ 1 ին հետէ ենթակայ եղած անձնական տկարութենէն՝ որ մարտի սկիզբները յայտնապէս տենդի ևս փոխարկ-ուեցաւ, նոյն ամսոյ 10 ին ի վեր կարևոր դեղօրէից գործածութեամբ ըստ բաւականին՝ առողջացած է։ Բժիշկք խորհուրդ կը տան օդափոխութեան երթալ և հանքային ջուրը մտանել։

Գեր. Սարգիս Ս. Արք Եպիսկոպոս Գալաեանց՝ նախանդամն Սինոդի և թեմակալ — Առաջնորդն Արցախոյ՝ ըստ խնդրանաց Հօտին իւրոյ՝ Հրամա-նաւ Վ.ԽՀ. Հայրապետի՝ անցեալ մարտ ամսոյ 13ին Մայր Ս. Աթոռս մեկնեցաւ Արցախոյ իւր Հօտին այցելութեան երթալոյ համար։

Հոգևոր Գրիգոր Ս. Եպիսկոպոս Սպինեանց և Արժ. Յովակիմ Տէր Գրիգորեանց և Գրիգոր Գառնակերեանց Վարդապետքն՝ ներկայ տարւոյ համար Մայր Աթոռոյս Տնտեսական Կառավարու-թեան ժողովոյ Անդամ կարգուեցան։

Երևանայ Արժ. փոխ. — Թեմակալին հետևե-ալ գրութիւնը, որով Մեծ. Աղամալ Մկրտիչ — Աղամալեանցի՝ իւր ազնուտիի Եղիսաբէթ մօր հանգստեան հօթնօրեայ յիշատակին համար ըստ սովորութեան կատարելիք ծախուց դումարը՝ բարի և գովելի դիտաւորութեամբ և նախանձելի օրինակ հանդիսանալոյ բազմանօք՝ ազգօգուտ նպատակաց ի նպաստ նուիրելը կը հաղորդուի, կը փութամք սիրով և շնորհակալութեամբ հրատա-րակել, և միանգամայն մեր սիրելի համայն Ազգայ-նոց ուշադրութիւնը հրաւիրել առ այն։

Խմբագրո-Ընկան Աբաբար Ամաբգոյ

Երևանցի Ազնուական Աղամալն Մկրտիչ Աղա-մալեանց ի 1ն ներկայ Մարտ ամսոյս իւրով յայ-տարարական խնդրագրով առաջի արար մեզ ի տեղի ծախուց ըստ տեղւոյս սովորութեան ի պա-տիւ հօթնօրեայ հանգստեան Ազնուտւոյ ծնողի իւրոյ Եղիսաբէթի՝ զվաթսուն րուբլիս բաժան-մամբ՝ Հոգեբաժին հասն սրբոյ Էջմիածնի տասն րուբ". Թեմական Դպրոցին Հայոց տասն րուբ". տեղւոյս Հայ — Օրիորդաց Դպրոցին քսան րուբ". և սրբոյն Յօհաննու Եկեղեցական Դպրոցին քսան րուբ"։ Սոյն այս Աստուածահաճոյ նուիրատուրծու-թիւն առնս ազնուականի այն հարկեաց վկս առաք-մամբ յիշեալ յայտարարական խնդրագրոյն՝ խնդ-րել ի Խմբագրութենէ Աբաբար պատուական ամ-սագրոյդ՝ տպագրութեան շնորհել զտեղի ի

դերահամբաւ. էջս Դորին ի լուր լսողը Ազգայնոց՝ գէթ առ յորդոր լինիցէ ամենեցուն փութալ այսու օրինակաւ կանխել ի նուիրաբաշխութիւնս փոխանակ մեծածախ հացկերոյթի հանդստեան հոգւոց, յօգուտ և ի պայծառութիւն նրբոյ Էջմիածնի միակ տեղւոյն պարծանաց Ազգիս Հայոց, նոյնպէս Եկեղեցեաց և Դպրոցաց, որով յարդարև Ազգս մեր միայն կարէ պանծալ ի փառս կրօնական և Ազգային յառաջադիմութեան օր քան զօր.

Փոխանորդ թեմականին Երիւանայ

ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ:

ի 5ն Մարտի 1870 ամի

Ալէքսան

Խմբագրական Աթոռոյս Էջմիածնի.

Հոգւարարձուն Աստրախանայ Հայոց Հոգևոր Դպրոցաց, Ցարգոյ Յովհաննէս Գրիգորեան Պ. Սարգսեանց, Ազգային ջերմեռանդութենէց շարժված Դպրոցների բարեշատութեանը ըղձալով՝ նուիրեց ի նպաստ դպրատներին մի հարիւր րուբլի արծաթ դրամ, ցանկալով կրկ իւր վերայ կոչումը Բարեբորդ Առաքելոյ: Վասնորոյ Հոգաբարձութիւնը նոյն Դպրոցների՝ ընդունելով նուիրաբերածնալ գումարը Պարոն Սարգսեանցէն՝ նշանաւորեց նորա անունը կոչումով Բարեբորդ Առաքելոյ և յայտնեց իւր կողմանէ դրաւոր գոհունակութիւն: Ուստի Աբարատ ամագրոյ միջոցաւ կ'փութայ հրատարակել նոյն Պարոնի ազգօգուտ նուիրատուութիւնը, լիայոյս լինելով՝ որ շատերը համազգայիններից կնախանձաւորվեն նորա այս օրինակ բարենպատակագործին, և չեն զլանալ իւրեանց համակրութիւնը ցոյց տալ Ազգային Դպրոցներին, որոնք յատուկ միջոցն են ազգի յառաջադիմութեան:

Հոգաբարձուք՝ Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց:

Քրիստափոր Դադաշեանց.

Սարգիս Բուրջալեանց.

Սիմէոն Պօպովեանց.

Գրիգոր Սողոմոնեանց:

Թ. 38

ի 24 Փետրվարի 1870 ամի

Աստրախան:

Խմբագրական Աթոռոյս ամառոյ.

Անցեալ միջոցներում պատահից ինձ՝ իմ անձնական գործով գնալ Փամբակաձոր գաւառը. բայց ճանապարհին մանաւոր տկարութիւն զգալով անձիս մէջը, ստիպուեցայ դադարեցուցանել շարունակութիւնս և շեղուելով ճանապարհից, կամեցայ՝ հանգչել այն մերձակայ գիւղում, որ անուանվում էր Որդնաձոր," գուցէ Վարդաձոր". և մինչ այն փութղի եկեղեցւոյ պարսպի մօտով անցանում էի, լսեցի յանկարծ մի քանի իրար խառնուած ձայն, որոնք երգում էին հայերէն. նորանց ձայնի դաշնակաւոր հնչմունքը շարժառիթ եղաւ իմ տկարութեանս մոռանալուն՝ դիմել փութացայ այն տուն, որից լսվում էր այն ձայնը. ներս մտնելով տեսայ որ յիսունի չափ երեխայք նստած ուսանում են. յետ սովորական ողջունին նորանց վարժիչ Գրիգոր Տ. Բաղդասարեանցի հետ, նստեցի. երգիչներ աւարտելով այն երգը՝ ուրիշ երկու երգեր էլ երգեցին. յետոյ հետաքրքրութեամբ ուղեցի իմանալ այն աշակերտների ուսանելի առարկայքը, որոնցից մի քանիսը, սովորում էին Ազգային և Սրբազան պատմութիւններ. մնացեալքը, պարապմունքին հասարակ ընթերցանութեամբ, և գլխաւորապէս զարմացայ այն ռամիկ ժողովուրդի դէպ ի ուսումնասիրութիւն ունեցած ջանքը, որ այդպիսի մի աննշան տեղում՝ ուսման ճրագը սկսել է մանաւորաբար լոյս տալ. էս միջոցին, բարեբաղդաբար, ներս մտան Հոգաբարձութեան երկու անդամները, որոնք լցուցին իմ հարցասիրութեան փափագը այն ուսումնարանի հանգամանաց մասին. նոցանից մէկին, Յովհաննէս Զաքարեանին, խնդրեցի տեղեկութիւն տալ ինձ, այդ Դպրոցի վաղուց հիմնաւորութեան կառավարութեան և որպիսութեան մասին. յիշեալ պարոն պատասխանեց ինձ այսպէս:

Մեր հասարակութիւնից մի անձն, Բաղդասար Տէր Բաղդասարեանց անունով, հիմնել է այս դպրոց և նորան պատկանում է սա. սորանից 40 տարի առաջ մինչդեռ մենք Տաճկաստանումն էինք, պարոն հիմնադրի պապը Բաղդասար Քահանայն ունեցել է մի հրաշալի Աւետարան, և ուսուցաց առաջին պատերազմին, երբ Ալաշկերտու և Բասենու քնակիչներ գաղթեցին Ռուսաստան, յիշեալ Քահանայն Աւետարան իւր հետ բերեց. և նորա մահից յետոյ, Աւետարանի ուխտաւորներ, առատ նուէրք-

ներով ձոխացնում էին նորա ժառանգներին. սո-
րա պէս, և միւս գաղթականների մէջ, շատ տեղեր
գտնվում էին արդիւնաբեր Աւետարաններ, որոց
տէրեր առանձին վայելում էին նոցա արդիւնք. մին-
չեւ անցեալ 1863 Թուականին, Հոգևոր տեսչու-
թեան հրամանաւ ժողովուրդեան ամէն տեղերից և
Էջմիածին տարուեցան. պարոն Բաղդասարն Էջմի-
ածին. գնալով յետ բերել կ'ընդրէ աւետարանը,
այս պայմանով միայն, որ ինքն Բաղդասար, իւր-
եան սեպհականութիւնից մի զոյգ սենեակներ շինէ
յանուն Դպրոցի և Աւետարանի արդիւնքը ու-
սուցչի առաջիկ տրուի. այս խոստմանբս Աւետարանը
յետ ստանալով վերադարձաւ իւր տուն, և հիմ-
նեց սենեակներ, և ուսուցիչ բերելով շուտով երե-
խայքը ժողովեցին այս տեղ և սկսեցին. բայց, ա-
ւաղ, քիչ միջոցից հակառակորդների նախանձա-
խնդրութեամբ դադարեցաւ առ ժամանակ. իսկ
երբոր, Նորին Վեհափառութեան Տ. Գէորգայ
Սրբազնակատար Կաթուղիկոսի շրջաբերական կոն-
դակի երկնաբարբառ ձայն կ'լսէ յիշեալ պարոն
Բաղդասարն, նոր սիրտ և հոգի առնելով կ'զօրա-
նայ, ամրապնդվելով նորից սկսումէ խնամել և շա-
րունակել. և ըստ այնմ, մինչև ցայսօր կայ, և
յուսալի է երկար շարունակութեան:

Ցայտնաբարբառ խոստովանում էր այն պարոն՝
որ հաղորդեց ինձ այս պատմութիւն, որ և ինքն
իսկ դանձապետ էր Աւետարանի նուիրանաց արկ-
ղէն, թէ տարեկան 40 ից մինչև 50 մանէթ ար-
ղիւնք հաղիւ ունի Աւետարան, և պակասորդը ըս-
կսեալ 1867 Թուականից, Տ. Բաղդասարեանցն
ինքն է լցուցանում, և ցանկանում է աւելի պայ-
ծառացուցանել և առաջ տանել:

Արդարև տեսնելով այն դեռևս երեխանե-
րի խումբը և լսելով այս պատմութեանն վերջին
պարբերութիւն (որովհետև առաջիններ խիստ ծա-
նրը էին լսելու), ուրախացաւ սիրտս, և փառք ու-
ղղեցի առ ամենաբարձրեալն, որ մեր աղքայնոց այն
ամենափոքր մասերի մէջ, որոց կեանքի հանգա-
մանքներին և վիճակների դրութիւններին նայելով
յաւիտեան անյուսալի կ'համարուի, թէ մի օր, սո-
ցա մէջն ևս ծագկելու է ուսման անուշահոտ ծա-
ղիկը, և ունենալ ձգտումն դէպ'ի բարոյական շար-
ժողութիւն. ինչպէս որ տեսայ, զարթնելէր նոցա
մէջ ուսումնասիրութեան եռանդը, ուսման ճա-
շակն առնելով. հասկացել են նորա օգուտը. յիշե-
լով և համեմատելով ուրիշ տեղիններր այն տե-
սածիս հետ, ցաւեցի, որ նոքա մինչև ցարդ ուս-
մունք պատանեկութեան հասուցած պիտոյ էր լի-
նէին. ընդ հակառակն, մինչ խանձարուրում փա-
թաթված էր, նոքա թուլասրտութեամբ անինամք
թողուցել են, և հոգին աւանդելու վերջակիտի վի-
րայ հասած է:

Վերջապէս, մեր ուրախասիրտ շնորհակալութիւն
արինք՝ թէ պարոն մանկավարժ Գրիգորին և թէ
հոգաբարձու պարոններին, և ըստ կարի յորդորա-
կան խօսքերով խրախուսելից յետոյ՝ օթեցի այն
գիւղումն, և առաւօտ առաջ տարայ իմ ճանա-
պարհորդութիւնս:

Եղիա Յ. Ալպոյաճեան

2 Մարտի 1870 ին
Լօռուայ Սահմանում:

Խմբագրո-ւեան Աբաբաբ ամառերոյ.

Նախկին Հոգաբարձուք Հոգևոր Դպրոցին Նուխ-
ւոյ, իրենց պաշտօնավարութեան եռամեայ շրջա-
նը լրացրած լինելով, ի տեղի նոցա՝ ընտրուեցան
ի նոյն պաշտօն Հոգաբարձութեան, պատուարժան
Աւագ Քահանայն Տէր Աւագեանց; Ցովհաննէս Քա-
հանայն Տէր Պօղոսեանց, և յարգի պարոնայք՝
Սօղոմոնն Սօսնիկեանց, Ղազարն Ամիրեկեանց,
Ցովսէփն Խառատեանց և Ցակոբն Օրտուեանց.
և Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեամբ՝
մարտ ամսոյ 5-րդ օրը՝ մուտ գործեցին Հոգա-
բարձութեան պաշտօնի մէջ, և մեծ եռանդով՝
անձնանուէր են Դպրոցի յառաջադիմութեանը.
տար Աստուած՝ որ այնպէս եռանդով վարեն: Հին
Հոգաբարձուաց՝ Դպրոցի վարչութիւնից հրաժեշտ
տալուն հետ՝ ի միասին, միաձորհուրդ՝ ուսուցիչ-
քըն ևս հրաժարեցան. որպէս զի իրենց արձակ-
մանքը՝ Դպրոցի Կառավարութեան խանգարումն
տան, և պակասաւոր կացուցանեն ժողովրդոց ա-
ռաջին՝ նորընտիր Հոգաբարձուքը. սակայն ընդու-
նայն համարուեցան իրենց տկար մտածութեամբ.
վասն զի յարգելի Հոգաբարձուք՝ ամենահարկա-
ւոր միջոցներ գործ դնելով, վուժանակի ընտրե-
ցին ուսուցիչք և Դպրոցին դասատուութեան կար-
գը՝ առանց շփոթելոյ շարունակեցին:

Արժանապատիւ Յակոբոս Արիստակէս Վարդապետը, որ ժողովրդոյ փափագանաց համաձայն, Հոգաբարձուաց թախանձանօք և ընտրութեամբ, վերատեսուչ կարգուեցաւ Դպրոցին, ի պատիւ Աղգի՝ կրօնական առարկայն յանձն առաւ. և կրօնական ուսուցչի համար նշանակած հարիւր րուբ. վարձը բոլորովին նուիրեց Դպրոցին, ի նշանագասիրութեան. յորոյ ի տիտուր արդարև արժանի է շնորհակալութեան, որ իւր պաշտօնի ծանրութիւնը՝ բաւական չհամարելով, իւր ազգասիրական եռանդեամբը յանձն առաւ՝ ենթարկել իւր թիկունքը, կրկնակի ծանրութեան։

Հոգևոր Դպրոցը՝ տասն տարից ի վեր, շարունակվումէ անընդհատ. բայց շատ անգամ՝ ձախորդութեան քայլերու հանդիպելով, ազատ՝ յառաջընթացութեան հանդիսի մէջ մնած չէ իւր շրջաններում. ուստի և ոչ մի պտուղ քաղած չէ ժողովուրդը նորանից երբէք. Դպրոցի Կառավարութիւնը միանգամայն հիմնուածէ սրբազրամարդեանց վրայ, որ գրեթէ՝ աղքատ, հարուստ, ազնուական և գեղջիկ, միօրինակ քան կոպէկից աւելի տուրք չունին հիմնական, համանման օժանդակութեանց ազգասէր և առատանուէր ազգայնոց. և այսպէս՝ խղճալի Դպրոցի Կառավարութիւնը, կանոնաւոր լինամտարութիւնից զուրկ է՝ նիւթականի մասին. իցէ թէ տեսնում էր՝ և իմ սիրելի քաղաքացի և գիւղական համազգայնոց սրտի մէջ, ազգասիրական շարժումներ՝ օրինակաւ հետևնակ ազգասիրաց, և Դպրոցի վսեմ նշանակութիւնը, ծանր կշռվէր նոցա աչքի առաջին, և իւրաքանչիւր ոք ըստ իւրումն կարի՝ համազուէր միտք դարձնել Դպրոցի վիճակին։

Գ. Երզնկացի։

Ի 7 Մարտ 1870 ամի
Ի Ք. Նոխի

ԱԳՔԻՐՄԱՆԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Նախընթաց յօդուածներէս մէկուն մէջ ցաւելով ասած էի թէ Պետարապիոյ՝ նա մանաւանդ Ագքիրմանի Հայազգի ժողովուրդները իրենց մայրենի լեզուն մոռացած՝ Տաճկերէն և պլ լեզուներով կխօսին ի վաղուց հետէ, և նոր սկսած են ուսումնասիրութեան անուրանալի յարգը ճանչնալու։ Ասոր ապացոյց է Ագքիրմանի Հոգևոր Դպրոցին Ուսուցիչ Ուրարակիր Մկրտիչ Տէր Մկրտչեանի այս օրերս ինձ գրած մէկ նամակը, յորում ուրախագոյացս սրտիս կպատմէ նա թէ Ագքիրմանի Հայ Հասարակութիւնը Մեծին Ներսիսի Պարթև Հայրապետին տօնախմբութեան օրը Ս. Պատարագին աւարտելէն յետոյ՝ միահամուռ բազմութեամբ ժողովուած են եկեղեցւոյ սրահին մէջ նղոզ գեղեցկաշէն Դպրոցը և աշակերտաց տարեկան հարցաքննութեան հանդէսը գոհունակութեամբ տեսնելէն յետոյ՝ ի խրախոյս յառաջադիմութեան աշակերտաց և Հոգևոր Դպրոցին, նոյնպէս և Օրիորդաց Դպրոցին ապագայ նիւթական ապահովութեանը համար ի ներկայութեան տեղոյն Աւագ Քահանային և նորա խրախուսանաց համաձայն՝ պայմանագիր մի յօրինած են հոգաբարձուաց յօժարութեամբը. որով յանձն առեր են մինչև վեց տարի կամաւոր նուիրատուութիւն ընել ըստ չափու կարողութեան յօգուտ ձրիաւարժ և աղքատ աշակերտաց։ Եւ նոյն օրը կարգացուած կարճ և ազդու ճառէն առաւել ևս յորդորուելով Դպրոցին մէջ ստորագրութիւն բացուած է և յաւականաչափ գումար մի ժողովուած է։ Մենք ի քաջալերութիւն և ի բարի օրինակ պլտոյ համազգեաց՝ արժան կհամարիմք այս տեղս արձանագրել նուիրատուաց անուանքը։

		դրամ
Նուիրատուք	Գէորգ Աւագ Քահանայ Մարութեան.	25
	Սահակ Աստուածատրեան	25
	Ծիրոն Աստուածատրեան	25
	Սիմէօն Աստուածատրեան	25
	Մելքիսեդեկ Աստուածատրեան . .	25
	Երեմիա Երեմեան	25
Երէցփոխան Գալուստ Փուիոլ		15
Յովհաննէս Յօհաննեանց		20
Կարապետ Աւագեան		15
Սարգիս Յօհաննեան.		5
Կարապետ Մալխասով		5
Սարգիս Թաթարով		5
Մերկևոիս Չերքէզեանց		5
Տրդատ Մերճանեանց		3

Սոցանէ զատ՝ եղած են շատերը որ առանց տո

բազրութեան խոստացած են ընել իրենց դրամական ձեռնտուութիւնը, որուն յօժարած են ամէնքը։

Այսպէս վերջացած է ըստ գրութեան մեր բանակին այն օրուան փառաւոր հանդէսը, և նոյնը հարկաւ պիտի շարունակուի վեց տարի շարունակ ըստ պայմանագրութեան։ Աստուած տայ որ ոչ միայն վեց տարի, այլ քանի որ Հայաստի սակաւաթիւ հասարակութիւնը իւր հաւատարիմ հպատակութեամբը և գործունեայ վաճառականութեամբը պատուաւոր տեղ մի և անուն ունի Ազքիրմանի և Ռուսաստանի այլ քաղաքաց մէջ յարատև մնայը իւր այս բարեգործութեանը և ուսումնասիրութեանը մէջ, որով յուսալի էր թէ գէթ օր մի Հայրենազուրկ Պեսարապիոյ Հայերը, իրենց նախնեաց Աստուածատուր լեզուովը խօսին և եկեղեցական ժամերգութիւնը ըստ կարի հասկանան, յորմէ թէև զուրկ են առ այժմ, բայց իրենց բարեպաշտութեամբը նախանձելի հանդիսացած են օտարաց։

Հարկաւոր կհամարիմ այստեղ յարակցել թէ հասարակութեան այսպիսի առատաձեռն նուիրատուութենէն ջատ՝ գտնուած են այնպիսի մարդիկ, որ իրենց մտհուանէն յետոյ՝ իրրև անմահ յիշատակ, կտակաւ աւանդած են զանազան անշարժ և շարժական կալուածներ, նոյնպէս և դրամական նպաստ լաւ ուսուցիչներ բերել տալու համար։ Ասոնցմէ մէջէն նրևելի են Մահտեսի Յովսէփ Վէքիլեանցն, որ այսպի մը և խանութ մի կտակած է, հանգուցեալ Յոգաբարձուն Դպրոցին, Մանուկ Մարութեան տուն մի գեղեցկաշէն, հանգուցեալ երէցփոխան Մկըրտիչ Աստուածատրեան 1000 րուբլի, նոյնպէս նա և Զերքէզեան և ուրիշները առատ նուէրներով ապահոված են Դպրոցին ապագայն։ Այսպիսի անկորուստ դրամագլուխները Հայաստի մանկանց քաջակիրթ դաստիարակութեանը համար պէտք է որ բարի նախանձով վառին բորբոքեն միւս քաղաքաց Հայոց ընակիչները Պեսարապիոյ մէջ՝ որ նոյնչափ կարօտ են բարեկարգ Դպրոցներու և հաւատարապէս զուրկ են մայրենի քաղցր լեզուի գիտութենէն։

Այսպիսի նորաստեղծ ուսումնասիրութեան եռանդը Ազքիրմանցոց չեմ կրնար գովեստով չնմանցնել Ազուլեաց ժողովրդին ժրաջան աշխատասիրութեանը իրենց Դպրոցը բարեկարգելու մասին, և չեմ տարակուսիր ասելու, որ ինչպէս Ազուլեաց Դպրոցը կրնայ մէկ հատիկ համարուիլ նոյն գաւառին մէջ և նախանձելի այլոց, նոյնը ժամանակաւ կրնայ լինիլ և Ազքիրմանինը, եթէ հոգաբարձուները չչեղչին իրենց բանած գովելի ճանապարհէն և վերը յիշատակուած պայմանագրութեան բառական խմաստը անթերի կատարեն։

Աշխատեցէ՛ք, սիրելի համաքաղաքակից՛ք իմ, աշխատեցէ՛ք համաձայն սիրով և միաբանութեամբ, այն Հոգևոր Դպրոցը, որոյ անունը սրբոյն Մեսրոպայ երանաշնորհ Թարգմանչին անուանը նուիրած էք խորհրդաւոր հետաւոտութեամբ, ձեզ ուշիմ և հայերէնախօս որդիք և յապագային հայրեր պիտի պատրաստէ, և այն Օրիորդաց Դպրոցը, զոր համեստաբայլ Ս. Հոգիսիմեայ անմահ կուսանին անուամբը պսակած էք, Ձեզ և Ձեր որդւոց համար պարկեշտասուն ամուսին և խնամածու մայրեր պիտի նուիրէ։

Ա՛յս է մեր փափաքը, և այս է մեր բոլոր աղգին ապագայ բարօրութեանը համար ունեցած յոյսն ու ակնկալութիւնը։

Ս, Մ.

Լոմբատրութեան Երեսից Ս. Գրիգորեան

Ուղարկելով գրութեանս հետ համառօտ հաշուեցուցակները Ճամախւոյ Հայոց Հոգ. Դպրոցին նուամեայ և հնգամեայ արդևանց և ծախուց, որոնք եղած են ներկայ յարդոյ Հոգաբարձուաց ձեռամբ, կխնդրեմ Խմբագրութենէդ պատուական ամսագրոյդ մէջ հրատարակել՝ի գիտութիւն ընդհանուր Հայ հասարակութեան։

Տէսո՛ւթիւն Հայոց Ճամախւոյ

ԱՆԴՐԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

28 Փետր. 1870 ամի
Շամախի.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ԱՐԳԵԱՆՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՇԱՄԱԽԻՈՑ Ի 49—ԼՆ. ՕԳՈՍՏՈՍԻ 1866 ԱՄԻ 31—Ն ՅՈՒՆՎԱՐԻ 1870 ԱՄԻ։

Հմ.	ԱՊԲԻՒՐՔ ԱՐԺԵԱՆՑ	1866		1867		1868		1869	
		ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.
1	Ի նախորդ Հոգեպարձուաց Դպրոցին . . .	2369	32	—	—	—	—	—	—
2	Ի նուիրատուրեամբ պսակատեարց Ջամախուց վիճակի	140	95	313	84	181	22	184	70
3	Ջահաւորութիւն ի Գրաւաճառութենէ . .	,5	—	44	55	20	—	38	5
4	Ջահաւորութիւն ի մոմավաճառութենէ . .	—	—	222	87	198	21	—	—
5	Ի կոպէկաղրամէ ոռճկաց Առենապետի և տասիճանաւորաց Կռնսիստորիոյ	18	55	30	6	13	34	21	68
6	Նուիրաղրամբ ժողովեալք ընդ ձեռն Մատթէոս Արք. Եպիսկոպոսի Առտրանայ ի հայոց ժողովրդականաց տեղւոյն	251	15	—	—	—	—	—	—
7	Ի նուիրաղրամէ ստացողաց զծննդական և զարձակման ի հոգևոր տեսչութենէ վկայագիրս . .	10	—	19	—	32	—	42	95
8	Ի Խաչահամբոյր արդեանց ուխտատեղեացն Ջամախուց վիճակի	—	—	10	53	10	16	8	43
9	Ցարդեանց հոգևոր օրինակատարութենէ օտարականաց Ջամախուց քաղաքի	—	—	32	—	16	—	9	70
10	Ցարդեանց հոգևոր օրինակատարութենէ Հայոց ժողովրդականաց գիւղաքաղաքին Սալիանու .	—	—	34	—	18	67	20	17
11	Խաչահամբոյր արդիւնք ժողովեալք ընդ ձեռն Սահակ Քահանայի Տէր Սահակեանց և Ցովհաննէս Քահանայի Տէր Աւագեանց ի ժամ օրհնութեան հանդերձից հարսնատեարց	—	—	11	50	—	—	—	—
12	Ի տոկոսագրամէ մայր գումարաց Ուսումնարանին	—	—	70	6	30	—	21	75
13	Ի վարձուց Ուսանող աշակերտաց Դպրոցին .	—	—	43	70	77	—	—	—
14	Ի գանձանակագրամէ ժողովելոց Յեկեղեցիս քաղաքայ Ջամախուց վիճակի ի հինդ նաւակատեաց աւուրս	—	—	—	—	118	56	72	98
15	Նուիրագրամ կտակեալ ի Ջամ. Հանգուցեալ Պ. Մարգարայ Կաճկաճեանց	—	—	—	—	—	—	150	—
16	Արդիւնք ստացեալք յօրինակատարութենէ ծլխական ժողովրդականաց Հանգուցեալ Ցովհաննէս Քահանայի Ջամալեանց	—	—	—	—	72	75	—	—
17	Նուիրագրամ ընծայեալ ի Տփխիսեցի աստիճանաւոր Անտոնէ Ղօրղանեանց ի ժամ պցկերթեան Դպրոցին	—	—	—	—	30	—	—	—
18	Նուիրական անուամբ մատուցեալ նախորդ ուսուցչէն Թուաց լեզուի Գէորգ Բէկի Ներսեսեանց, ոռճիկս հինգ ամաց ի Դպրոցին Ջամախուց .	—	—	—	—	—	—	47	51
19	Ի Բաժին անուամբ նուիրագրամէ ժողովելոց ի հայոց ժողովրդականաց Ջամախուց քաղաքի . .	—	—	—	—	—	—	521	—
	Գումարն է . . .	—	—	—	+	—	—	5583	91

	ԾԱԽՔ	1866		1867		1868		1869	
		ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.
1	Ռոճիկք Ուսուցչաց և ծառայի	152	64	583	56	765	15	743	51½
2	Ի գին պրեզի փայտից և վառն պլոց մանրամասնաբար ծախուց	43	25	108	82	80	20	77	14
3	Ի գին սպիտակ մեղրամոմից, ճնացելոց ապառիկ ի վերայ եկեղեցեաց՝ Բագրեւայ, Ղուբայու և Լահիճու	—	—	—	—	—	—	172	77
4	Ի գին գնեալ դասական գրեանց	—	—	—	—	—	—	145	26
5	Ի գին գրեանց տուելոց աշակերտաց Դպրոցին ի պարգև վառն յառաջադիմութեան նոցա . . .	—	—	17	70	—	—	25	50
6	Գրեցան ի ծախս Համաձայն հրամանի Սիւնոյ Սրբոյ Էջմիածնի գրամք, ճնացեալք ի 500 րուբլի պարտուց Հանգուցեալ Մէլիքում Բէկի Շահնազարեանց՝ Դպրոցին Շամախւոյ՝ ի պատճառս անանկութեան նորա	—	—	—	—	—	—	182	—
7	Գրեցան ի ծախս Համաձայն հրամանի նոյն Սիւնոյին ի գին 34¼ փունթ մոմից, կողոպտելոց ի տանէ Գործակատարին Ղազունլուի ի սպանման նորա	—	—	33	—	—	—	—	—
8	Գրամք ծախեալք ի վերայ նորոգութեան պնակաւորեալ և խախտեալ յերկրաշարժութենէ տեղեաց Դպրոցին Շամախւոյ	—	—	—	—	—	—	85	50
	Գումարն է . . .	—	—	—	—	—	—	3216	40½
	Առ 1ն յունվարի 1870 ամի ի ձեռս Ուսուցմանարանի սակական մնացուար 2376 րուբ 50½ կոպեկ, յորոց 1919 րուբլի 76 կոպեկ գտանին ի վերայ զանազան անձանց տոկոսեօք, 261 րուբլի 2 կոպեկն է ի գին 8 փութ 26¾ փունթ մեղրամոմից. իսկ 195 րուբլի 72½ կոպեկ առ գանձապետն Հոգևոր Դպրոցին Շամախւոյ	—	—	—	—	—	—	2376	50½

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Բաց ի յայսոսիկ գրամոց ունի Դպրոցն ստանալ՝ 1) վառն 1867 ամի Եկեղեցւոյն Բագրեւայ ի գին 3 փութ մոմից՝ ձի հարիւր երեսուն և հինգ րուբլի. 2) Եկեղեցւոյն Ղուբայու վառն 1868 ամի ի հաշիւ մոմագնոցն 42 րուբլի 50 կոպեկ (այս գրամ ստացեալ է յամենայն յունվարի 1870 ամի). 3) Եկեղեցեացն Լահիճու դաւառակի ի գին 1 փութ 20 փունթ՝ 67 րուբլի 50 կոպեկ. 4) Մնան ապառիկ կալուածագրամք ի վերայ կապալառուի վանքապատկան Հողոց Մէյսարու վանից, Կոլէժսկի Սեկրետար Մարտիրոս Բէկի Գեօգջայեանց վառն երից ամից՝ որն է՝ ի 1ն սեպտեմբերի 1865 ամի ց1ն նոյն ամսոյ 1868 ամի՝ 240 րուբլի. (վերջին երկու յօդուածոց գրամն ունի ստանալ Դպրոցն ի կարճ միջոցի). 5) Մնան ապառիկ կալուածագրամք ի վերայ կապալառուի նոյն վանքապատկան Հողոց Ջաւատ Բէկի Վլասեանց վառն միոյ տարւոյ՝ որն է՝ ի 1 էն սեպտեմբերի 1868 ամի ց1ն նոյն ամսոյ 1869 ամի՝ 106 րուբլի. 6) Մնայ ապառիկ նուիրագրամ կտակեալ ի Շամախեցի Հանգուցեալ Պետրոսէ Սերկէյեանց՝ 5 րուբլի. 7) Մնան առ 1ն յունվարի 1870 ամի առ գրասիաճառն Հոգաբարձութեանս Ուսումնարանապատկան անվաճառ գրեանք 309 հատ՝ արժողութեամբ և հանդերձ շահաբերութեամբ 190 րուբլի 32 կոպեկ. 8) Մնան տոկոսագրամք վառն Ուսումնարանապատկան գրամոց՝ 264 րուբլի 16 կոպեկ.

Գումարն է 1050 րուբլի 48 կոպեկ.

Լուիզպուրգեան Աբգարեան ամառանոցը

Անցեալ գիտուվար ամառներմուժ կարգացինք մեր քաղաքացի Ցարգոյ Մատինեանցի առ տեղւոյս Հոգեւոր Դպրոցն վերաբերեալ պատուական նամակը, որը իրեւ ուրախառիթ լուր հաղորդել է վերոյիշեալ Դպրոցի փոխոխումեան աղագաւ։ Արդարեւ Ցարգոյ Պարոնը շատ յուսով է եղել փոխոխումեան վերայով, բայց այդ յոյսը ինչպէս արդ ականատես ենք, շատ վաղ՝ և յետոյ կատարուելու բան է, միայն չենք կարող բացատել այն փոխոխումիւնը, որը ստացել է Հ. Դը. արդարեւ իրեւ մի ամենահարկաւոր առաջնական գործ ուսումնարանի համար ժողովեցան, խորհեցին, փոփոխումիւններ արին, (Պ. Նամակագրի կարծիքին համաձայն.) միայն շրջումնքներին նեղումիւն տալուց, և օդը թնդացնելուց՝ ի զատ, ուրիշ ինչ արին — մի տեսուչ ընտրեցին, ուրիշ ինչ մի գործ յառաջադրեցին, կամ թէ մեր նորընտիր Տեսուչը ինչ մի կարևոր յեղափոխումիւն արաւ Ուսուցիչների մասին, բաց՝ ի տեսուչ տիտղոսից և ամսականից ...։ Դոցանից՝ ի զատ ոչինչ յեղափոխումիւն չէ արած տակաւին Պատուելի Հոգեւարձումիւնը. նոյն է, ինչ որ կայ, այդպէս մնալու է, քանի որ մեր իշխանները և հոգաբարձուները անտարբեր են դէպ այդ նախնական գործը, և քանի որ իւրեանց մի կօպեկը աւելի կը հասնին քան թէ Ուսումնարանի հազարները, ինչպէս յայտնի է իւրեանց օր առուր հրաժարական տալուց, և այս մշտապէս կրկնելուց "դիցուք թէ ես չկամ"։

Միայն Պ. Մատինեանցի նոյն նամակի ծանօթութիւնքն հոգաբարձումեան առաջարկութիւնը ամենակարևոր է. այդպիսի մի իրաւասութեան (որը վերաբերում է դէպ՝ ի Ուսուցիչների անկանոն դասատվութեանը, և մի անհատի անձնական հիւանդութեանը, որը արդարև աշակերտներին դիտակցութիւնից զրկողութեան մի մեծ վիհ է,) բացասութիւնը, ճշմարտասիրացութիւն է։ Անտարակոյս ենք որ միտք կը դարձնէ հոգաբարձութիւնը և կը անօրինէ այդ ամենահարկաւոր մասին։ Այդ մտհարներ վիհից մեք ևս աղատ չենք մնացած, և դեպի այդ վերաբերեալ ասելիքներս ցոյց տալու ենք մեր "Դպրոցական կեանքից" անուանուած յօդուածից, որը հաղորդելով բարեջան Խմբագրութեանդ, խնդրում ենք տեղն տալ նրան Աբգարեան մի որ և իցէ անկիւնում։

Պետրոս Հայկազեան

1870 մարտ 13

յԱղէքսանդրապոլ։

Յանցելումս Պարսից Օգոստ. Շահէն առ Ս. Կաթողիկոսն Տ. Տ. Գէորգ Դ. շնորհուած Ակն-յոս և Ազբեգական առաջին կարգի շքանշանը հանդերձ կանաչ ժապաւենիւ՝ որ Ս. Պ. բուրդոյ պարսկական նորոդ կարգեալ Դեսպանին ձեռամբ առաքուած էր՝ ի Պ. բուրդ, Ներսեայ Օգոստ. Պայսեր կողմանէ հաձումիւն տրուած լինելով զայն կրելոյ, անցեալ մարտ ամսոյ 25 ին հասաւ՝ ի Ս. Էջմիածին՝ Կովկասեան փոխարքայական Պատուավորութեան միջոցաւ. զոր Ս. Հայրապետը ստացաւ արժանին պատուով։

Յաջորդ օրը (մարտ. 26) մինչդեռ Մայր Եթոռոյս բոլոր Միաբանութիւնը և Պ. Ասպետանաւորները և այլք փութացած էին՝ ի վ. Էհարանն առ՝ ի շնորհաւորել, Նորին Վ. Էհատիառութիւնը՝ նոյն նշանը հանդերձ ժապաւենիւ՝ ի կուրծսն ունելով՝ պարապային յարմար մի քանի համառօտ խոսքեր արտասանելով, իմացոյց թէ՝ ինքն միայն՝ ի կուրծսն կրկրէ զայն նշան, իսկ նորա փառքն և պատիւը կը պատկանի Մայր Եթոռոյ մերում և ընդհանութեան Ազգիս Հայոց հայն հայն։ Նէ ապա բարեմաղթեց վասն Օգոստ. Շահին Պարսից, և օրհնեց զՕգոստ. Պայսեր ամենայն Ներսեայ։

Եղնիայէն կը գրեն թէ երսունի չափ ուսում-նասէր անձինք իրենց հայրենակցաց մէջ ուսում և կրթութիւն ծաւալելու ազնիւ նպատակաւ Անձնուէր ընկերութիւն մը կազմելով՝ Կ. Պոլսոյ Անձնուէր ընկերութեան հետ կապուելու խնդիր ղրած են առ Մեծայարգ Քրիստոստուր Էֆէնտի Ղազարոսեան, որ ինչպէս յայտնի է, Անձնուէր ընկերութեան առաջին հիմնադիրներէն մէկն է և մինչև ցայսօր ալ անոր յարատևելուն և ամէն կողմ տարածուելուն գլխաւոր ջանադիրն եղած է։

Վերոյիշեալ նորահաստատ ճիւղն արդէն իր արդեամբ դպրոց մ՚ալ մատակարարել սկսած է, որով կը ցուցնէ թէ կարևոր նպաստ պիտի մատուցանէ Եդեսիոյ ազգայնոց մտաւորական զարգացմանը։ Այսպիսի ջանք մը գոհունեան և քաջալերութեան արժանի է։

Մասիս Թիւ 949

Կը լսենք թէ Անտոնեան միաբանութեան անդամ վ. Էնֆիէձեան Գրիգոր վարդապետը, որ Նախկին Տեղապահ Բարսեղ Գերապայծառին հետ Հռոմէ գացած էր, հոն կախակայուեր է՝ անցեալները մայրաքաղաքիս մէջ հրատարակած հարց պատասխանէօք տետրակին պատճառաւ. բայց այս արգելքը մտիկ չընկնելով Անտոնեանց վանքին մէջ պատարագ ըրած ըլլալուն համար Իրօրականատային առջև դատի կոչուեր է։

Ասոր վրայ Գրիգոր վարդապետը Հռոմէն անյայտ ըլլալով, Իրօրականատային կողմէն անցեալ շաբաթ մայրաքաղաքիս կաթողիկոսական տեղապահին հետազրուեր է որ եթէ Կ. Պոլիս եկած է, զայն ըռնել տալով դարձեալ Հռոմ ղրկէ։

Զարմանալին այս է որ Գրիգոր վարդապետը մայրաքաղաքս եկած չէ, և շաբաթէ մ՚ի վեր այս լուրը խնդացուած ըլլալով, մինչև հիմայ ուր գացած կամ ուր ծնացած ըլլալը չկրցաւ գիտցուիլ։

Ուստի Գրիգոր վարդապետին բազմաթիւ բարեկամներն ու ծանօթներն իրաւամբ մտատանջութեան մէջ կ՚ենան վախնալով որ Հռոմէ ղայն անհետացուցած և վերջն ալ փնտռելու եկած չ՚ըլլայ, ինչպէս որ Հռոմի պատմութեան մէջ օրինակները կան, բայց ներկայ դարուս մէջ անհաւատալի կը թուին . . .։

Հետևեալ հանրագրութիւնը՝ Հայազատեան Նիւնուէարնակ Ատրիներէն ղրկուած է ի Պատրիարքարան, ղրոյ արժան կը համարինք հրատարակել և ազգ. վարչութեան խորին մտազրութեանը յանձնել։

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ Ի ՆԻՒՆՈՒԻ (ՄՈՒՍՈՒԼ)

ԳՕԴ. Ը. 40-50 տարի առաջ մեր մէջէն ոմանք բաժանուելով պապականութեան յարեցան։ 30 տարիի չափ առաջ մեզմէ եկեղեցի մը միայն ուղեղով՝ հրաման բերել տուին։ Այս միջոցին Մուսուլի կուսակալ Ինճէ պայրաքտար զատէ Մէհմէտ փաշան՝ մեզմէ բաժանուած կաթոլիկներէն կաշառուելով՝ մեր Ս. Աստուածածին, և Ս. Թումման առաքելոյն երկու եկեղեցիները բաժնեց. Ի լիաս պատրիարքին այս եղելութիւնը լսելով՝ Կ. Պոլիս եկաւ Սուլթան Մէճիտի օրովը, և հրովարտակ հանելով՝ Մուսուլ գնաց, և պատերը քակեց, ղոր պապականք շինած էին, և եկեղեցիները առաւ։

ԳՕԴ. Բ. Մեր պատրիարքը Մէրտին գնաց. և կուսակալը կաթոլիկաց կողմէն բռնելով՝ մեր եկեղեցիները վերստին բաժնեց։ Ասոր համար Պիշնան անուն եպիսկոպոս մը մեր ազգին կողմէն Պօլիս ղրկուելով՝ Բ. Դռնէն հրովարտակ հանեց, որ կաթոլիկաց իրաւունք չունենալը կ՚վճռէր, և կը հրամայէր միայն եկեղեցի մը տալ անոնց։ Երբ մեր եպիսկոպոսը հրովարտակը առած՝ Մուսուլ կը հասնի, կաթոլիկները կընդդիմանան Տէրութեան հրամանին, և եկեղեցիները նոյն վիճակին մէջ կը մնան 29 30 տարիէ ի վեր մինչև ցայդ։

ԳՕԴ. Գ. Կաթոլիկները՝ մեզմէ հինգ եկեղեցի ալ կողոպտեցին. մենք երկար ժամանակ մեր իրաւունքը պահանջելով դատ կը բանայինք յաջորդաբար եկող կուսակալաց առջև. սակայն կուսակալները միշտ կաթոլիկաց կողմէն շահուելով՝ մեր դատերուն մտիկ չէին ընէր։

ԳՕԴ. Դ. 1860 թուականին՝ կաթոլիկները՝ կուսակալը (Քանան փաշա) իրենց կողմը շահեցան՝ նոր եկեղեցիներ շինելու թոյլտուութիւն ստանալու համար. և մեր եկեղեցեաց կալուածները (12 տուն և արտեր) յափշտակելով՝ տուները քանդեցին. և անոնց տեղերուն վրայ երկու եկեղեցի շինեցին։

Մեր դատերը միշտ անլսելի կը մնային, վասն զի մինչդեռ կաթոլիկները օտար տէրութեանց հիւպատոսները իրենց օգնական ունէին, ընդհակառակն մեր ազգը երբէք օգնական մը չունէր։ Մեր վիճակը միշտ խնդացուցած ենք Ձեր պատրիարքարանին,

և 30 տարուընէ ի վեր պատահած անցքերը արձանագրուած են Ձեր պատրիարքարանին մէջ, ինչպէս որ սոյն 30 տարուան միջոցին Կ. Պոլսոյ մէջ նստող Հայոց պատրիարքներն ալ գիտեն մեր ազգին և եկեղեցեաց դատերը։ Պաղտատու նախորդ կուսակալին ալ շատ անգամ լողրբած ենք։

ՅՕԳ. Ե. Հասունեանին՝ կաթոլիկաց օգնութիւն ընելը։

ՅՕԳ. Զ. 1868 Նոյ. ամսուն կաթոլիկները՝ մեր միւս երկու եկեղեցիներն ալ ուզեցին բաժնել երբ որ Մուսուլի կուսակալն էր Զիւհա փաշան, որ անոնց կողմը բռնած էր։ Երբ որ անօգնական մնացած էինք, չորս հեռագիր քաշեցինք, Ա.ը՝ Բ. Դրան, Բ.ը՝ Ձեր պատրիարքարանը, Գ.ը Պաղտատու վիլայէթի կուսակալին (Թագէտտին փաշա), իսկ Գ.ն ալ մեր Ցակոբ պատրիարքին, և օգնութիւն խնդրեցինք։ Մեր Ցակոբ պատրիարքն ալ Տիգրանակերտէն չորս հեռագիր քաշեց նոյն միջոցին, Ա.ը Բ. Դրան, Բ.ը Ձեր պատրիարքարանին, Գ.ը Պաղտատու վիլայէթի կուսակալին և Դ.ը Մուսուլի կուսակալին։ Ա.յս միջոցին Բ. Դռնէն Մուսուլի կուսակալին հեռագիր մը քաշուեցաւ, որ կը հրամայէր մեր դատը արդարութեամբ տեսնել։ Դարձեալ նոյն ամսուն (Նոյ. 2) Պաղտատու կուսակալը՝ Մուսուլ հեռագրելով երկու աղերէն մէկ մէկ եպիսկոպոս ուղեց երկու աղգաց դատերը տեսնելու համար. դատը տեսնուելէն վերջը մեր իրաւունքը յայտնուեցաւ, և կուսակալը՝ կաթոլիկաց եպիսկոպոսին յայտնեց թէ երբէք իրաւունք չունին, և հետևաբար պէտք է յափշտակած եկեղեցիները և կալուածները ետ դարձնեն, բայց իսկոյն կուսակալին պաշտօնէ դադրելուն լուրը կը հասնի, և կը հրամայուի եպիսկոպոսաց իրենց տեղը դառնալ։

ՅՕԳ. Է. 1869 ապրիլ ամսուն Պօլսէն Պաղտատու վիլայէթի միւշիւրութեան պաշտօնով Միհհաթ փաշան, Պաղտատ հասնելով և անկէ ալ Մուսուլ եկաւ, որ մեր դատը անոր յայտնելով՝ տերութեան մեզ տուած հրովարտակները ցոյց տուինք անոր, որ անձամբ եկեղեցիները գնաց տեսաւ, և իրաւունքը մեր ձեռքը ըլլալը յայտնելով, կաթոլիկաց ալ իրենց անիրաւ ըլլալը յայտնէն ետքը ըսաւ անոնց այժմեան օրէնքները ըլլային, այժմ ես ձեր շինած եկեղեցիները կը փլցնէի, վասն զի դուք առանց հրամանի այս եկեղեցիները շինած էք, և հրաման տուաւ կաթոլիկաց որ եկեղեցիները և կալուածները մեզ վերադարձնեն։ Սակայն կաթոլիկները իրենց յաղթուիլը տեսնելով՝ օտար տէրութեանց հիւպատոսներու միջնորդութեամբ Մուշիր փաշային աղաչեցին որ այս խնդիրը կամ թողու։ Ճիշտ այդ փաշան մեր իրաւունքը խոստովանելէն վերջը անհոգութիւն ըրաւ. վասն զի գաղղիոյ հիւպատոսէն ակնածեց որուն պաշտպանութեան տակն էին կաթոլիկները. փաշան չորս հինգ օր կենալէն ետքը Պաղտատ դարձաւ, և խնդիրը վերստին կամ մնաց։

ՅՕԳ. Ը. Մուսուլի կաթոլիկաց առաջնորդ եպիսկոպոսը այժմ Հռոմ կը գտնուի, երբ Հռոմէն դառնայ կարելի է Պօլիս, և որովհետև ասկից առաջ երէք անգամ եկած էր տերութիւնը խաբելու և չը յաջողեցաւ, գուցէ այս անգամ նորէն փորձ մ՚ալ փորձէ, վասն զի իր յոյսը դրած է Պապին և Հասունեանի վրայ. ուստի կը խնդրեմք Ձեր Սրբազնութենէն որ ուշադրութիւն ընէք անոր երբ հոս գայ, որպէս զի տէրութիւնը խաբելով հրովարտակ չառնէ։ Նաև կը խնդրենք Ձեր բարձր Սրբազնութենէն որ չը մոռնաք Ձեր Ասորի եղբայրները, վասն զի մեր եկեղեցեաց և անոնց յատուկ կալուածոց յափշտակութեանց համար մինչև ցարդ մեր վարած դատերը անօգուտ են եղած. 30 տարիէ ի վեր մինչև ցարդ պատահածները արդէն արձանագրուած են թէ տէրութեան քով և թէ Պատրիարքարանիդ մէջ։ Մուսուլի մէջ 1000 տունի չափ ընտանիքներ իրենց իրաւունքները կորուսած՝ Ձեզ կը դիմեն օգնութիւն և պաշտպանութիւն խնդրելով, ինչպէս մեր Ազգը ասկից առաջ ալ դիմած է, յուսալով որ չէք զլանար Ձեր օգնութիւնը և պաշտպանութիւնը մեր իրաւանց վերստին մեզ վերադարձնելու միջնորդութիւնն ընելով։

Մուսուլի հին Յակոբեան Ասորի Ժողովուրդը։

Մ՚ամաչ Ի՚ր 58

ԳԱՂՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐՈՂԱՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Մարտ 6։ — Հին Նախիջևանայ Փոխանորդ Մխիթարեանց Ստեփաննոս Վարդապետին վերայ՝ թէ վիճակային գործոց և արդեանց՝ և թէ այլ առիթներով եղած դանգատանաց քննութեան համար, Երնջակու վանահայր Արիստակէս Վարդապետ Սեդրակեանց Զննիչ կարգեցաւ, միանգամայն

հրաժարեցնելով Մխիթարեանցը փոխանորդական պաշտօնէն մինչ ցվերջաւորութիւն ընդհանութեան։

Մարտ 11։ — Ըստ հրամանի Ս. Կաթողիկոսի՝ միաբան Մայր Աթոռոյս Մկրտիչ Սարկաւագն Ա՛յվազեանց Իզմիրցի՝ յաղագս անպատեհ գործոցն և անբարոյականութեան՝ իսպառ զրկեցաւ սարկաւագութեան կարգէն, միանգամայն հոգևոր կոչումէն և դասեցաւ ընդ հարկատուս։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն և վերջ։ Տե՛ս էջ ժ. և ժԱ։)

Լսողութեան գալով՝ մենք ամեն քայլափոխում տեսնում ենք, որ մարդիկ, որոց ականջը շատ է պարապել և վարժուել դաշնակական ձայներով, նոցա լսողութիւնը շատ ընդունակ է կրթութեան և կատարելագործութեան. բայց կարելի է և ուրիշ տեսակ օրինակներ բերել, թէ լսողութիւնն էլ, միւս զգայարանքների պէս ընդունակ է ունակութիւններ ստանալու գրգռողութիւնից։ Կայրերը, որոնք ուրիշներից շատ աւելի լսողութեան պէտք ունին և շատ են գործածում այս զգայարանքը, միջոց են տալիս մեզ համոզվելու, թէ նոցա լսողական զգայարանքը միշտ զօրանալու և կատարելագործուելու վրայ է։ Ինութեան տեսանելի գեղեցկութիւնները վայելելուց զուրկ լինելու պատճառաւ, լսածներից ուզում են բերկրութիւն քաղել և անյագ ցանկութեամբ լսում են քաղցրանուագ երգերը։ Սորանից է, որ երաժշտութիւնը ոչ թէ միայն զբօսանք, այլ նաև ապրուստ ճարելու գործ է դարձած նոցա համար։ Եւ այս պատճառաւ կայրերու դաստիարակութեան մէկ նշանաւոր մասն էլ այս գեղարուեստն է համարուած։

Բայց բերենք լսելիքի զարմանալի ունակութեան մի օրինակ, որ Բրշի վկայութեամբ պատմում է Ապերքրոմպին։ Փիլադելփիացի երկու կոյր և համակով պատանի եղբայր են եղել, որոնք փողոցի մէջ մանգալիս կարողանում են եղել իմանալ փողոցների մէջ տեղ տեղ տնկուած սիւներկներուն մօտենալը՝ նոցա բոլորտիքը գետնին վրայ կոխած ժամանակ յառաջ եկած մասնաւոր ձայնից։ Սոքա աղաւնիներ էլ են եղել պահելիս, փոքրիկ պարտիզի մէջ զբօսանք անելիս, սոքա կարողանում են եղել աղաւնիներու անուններն առանձին առանձին տալ, լսելով միայն գլխու վրայով թռչելիս հանած թեւերու ձայնը։

Արդէն հաստատուած բան է, որ կոյրերը աչքով չեն կարող տեսնել իրանց դէմ պատահած մեծ և հաստատուն մարմինները, կարողանում են այնու ամենայնիւ իմանալ իւրեանց այն մարմիններուն մօտենալը մինոլորտի դիմահարութեան աւելնալուց։ Աչքը տեսնող բայց ոչ արհեստական լոյս և ոչ մի ուրիշ առաջնորդ ունեցող մարդ, այնչափ համարձակ չէ կարող մանգալ տան չորս կողմը մութ գիշերը, որքան կոյրը, իւր մնացած զգայարանաց մանաւանդ շօշափողականին նրբութեամբ։ Բայց թէ ինչ սքանչելի նրբութեան է հասնում շօշափողական ընդունակութիւնը և ինչպիսի զարմանալի ունակութիւն է ստանում նա, կարող ենք տեսնել արդէն յիշած Յակոբոս Միչելի վերայ, որ բացի կուրութիւնը, լսողութիւնից էլ զուրկ էր. սա առանց տարակուսանաց իւր սեպհական բաները շօշափելով էր որոշում, թէ և իրանը և ուրիշինը ճիշդ միևնոյն ձևի, միևնոյն նիւթից շինուած լինէր։ Եւ զարմանալին այնէ, որ պզտիկուց իրանց տան բոլորտիքը երկու հարիւր կանգունի չափ տեղ այնպէս որոնել, ինչ կայ չկայ տեղնիտեղը հասկացել էր, որ սովորութիւն էր արել, առանց առաջնորդի՝ անվախ՝ համարձակ որ կողմն և կամենար՝ մանգալ։

Վերջապէս՝ տեսողականութեան վերաբերութեամբ էլ տեսնում ենք սովորութեան ազդեցութիւնը. աչքը մինչև այն աստիճան կարող է սրանալ, որ ուրիշներու չը տեսած հաղարաւոր բաները տեսնէր. այս ունակութիւնը մանաւանդ ուժեղացած ենք տեսնում խուլերու վրայ, որոնք՝ կան այնպիսի օրինակներ, որ կարողանում են ուրիշների ասածը շրթունքներու շարժմունքից հասկանալ քիչ շատ և երբեմն շատ մեծ ճշդութեամբ։ Այս բանը այնպիսի մի ընդհանուր բան է, որ հաստատութեան կարօտ չէ և հնարաւոր լինելու շատ վաւերական իրողութիւնների վկայութիւն կարող էինք բերել, բայց բաւականանանք մէկ օրինակով։ Պըրինէդ եպիսկոպոսը իւր մէկ նամակի մէջ այսպիսի մի աղջիկ է պատմում. "Երկու տա-

բեկան էր, ասում է, իմացուեցաւ որ ականջները խուլացել են. այն ժամանակից՝ դեսը ինչ որ խօսուէր, չէր իմանայ. Թէպէտ և բարձր ձայն որ հանէին լսում էր, բայց շրջապատողների շրթանց շարժմունքը դիտելով, այնչափ բան սովորեցաւ, որ նոցանով ծածկաբանութեան պէս մէկ բան շինեց. պատահում էր, որ սորանով խօսողներու հետ խօսակցում էր մինչև երեկոյ։ Բայց մինչև որ խօսողի շրթունքներու շարժմունքները չը տեսնէր, ամենևին բան չէր հասկանար։ Ընդ սմին սորա շօշափողական ունակութիւնն էլ սաստիկ նրբացած էր" ։ "Սա մէկ քայր ունէր, շարունակում է Պրըները, որոյ հետ ամենից շատ կը խօսէր իւր յօրինած լեզուով. գլուխը ձեռքը նորա բերանի վրայ դնելով, հասկանում էր նորա ասած խօսքերը, և այսպէս մօտ ժամանակն էլ խօսակցում էր իւր քրոջ հետ" ։

Վերջացնելով օրինակները մենք յարմար ենք համարում յառաջ բերել այստեղ Բէլիտի խօսքերը. "Ոչ թէ միայն մարդիկ, այլ և երեխաները, անխելքները և անբանները էլ, ասում է նա, ի ծնէ չունեցած հմտութիւնները ստանում են սովորութիւնով և ունակութիւնով ։ Մարդկանց գլխի ամէն պարապմունքը, որպիսի թող և իցէ, տալիս է միշտ գործողին իւրեան յատկացեալ այս տեսակ հմտութիւններ ։ Հովիւը իւր հօտի ամէն մի ոչխարը ճանաչում է, ինչպէս որ մենք մեր ծանօթները տեսնելիս իսկոյն կը ճանաչենք. և եթէ նորա հօտը մի ուրիշ հօտի հետ խառնուի, նա իւր ոչխարները մէկ մէկ կը ջոկէ առանց սխալվելու ։ Մսագործը իւր ոչխարներու և արջառներու վերայ գցած մէկ նայեացքից արդէն իմանում է, գոռ ևս չը մորթած, թէ ի՞նչպիսի որակութիւն և որչափ ծանրութիւն ունին նորա ։ Երկրագործը խոտի դէզը և ցորենի շեղջը կարօղանում է աչքով կշռել, և որքան բան լինելը իսկոյն ասում ։ Նաւաստին՝ նաւը դեռ իրանից շատ հեռու՝ նորա ինչ տեսակ շէնք ունենալը. և մէջը ինչ բեռ և որչափ հեռու լինելը որոշում է ։ Ձեռագրի վարժ մարդը գիրը տեսնելով, իսկոյն և եթէ ճանաչում է իւր բարեկամը ։ Փորձառու պատկերահանի ձեռքը պատկեր ընկած ժամանակ, կարօղանում է իմանալ, եթէ ինչ երևելի նկարչի գործ է այն։ Միով բանիւ ամեն մարդ մէկ մէկ ստացական հմտութեան է ունենում իւր զբաղմունքը արած գործին և նորան նուիրած սիրոյն ուշադրութեան և վարժութեան համեմատ" ։

Արիստոտելէս՝ իմաստութիւնը, խոհեմութիւնը, ողջամտութիւնը, փիլոսոփայութիւնները և արհեստները, առաքինութիւնը և կեղծաւորութիւնը, անառակութիւնը բոլորն էլ սովորութիւններ էր կոչում. և եթէ նա սորանով ուզում էր ասել, թէ բոլոր այս յատկութիւնները զգայողութիւնից են ուժ ժեղանում և ամրապնդում, ապա ուրեմն նորա միտքը միանգամայն ճշմարիտ էր ։ "Ո՞վ կարող է, հարցնում է Բէկոնը, երկմիտ սովորութեան ուժի և ազդեցութեան մասին, տեսնելով, թէ ինչպէս մարդիկ անհատատ են առ հասարակ մի որ և իցէ բանի համար տուած իւրեանց բաղմաթիւ խօսքերին և երդումներին, վկայութիւններին, և օրինաւոր պարտաւորութիւններին և հանդիսաւոր խօսքերին. թէ ինչպէս նոքա այսպիսի խոստումները ներից յետոյ, ասում են և կատարում միևնոյնն իսկապէս, ինչ որ և առաջ անում էին. կարծես թէ՝ նոքա բոլորեքեանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ սովորութիւնով մեքենաներ լարած" ։ Մաքիավելլի ասում է ևս, թէ չան կատարելու մէջ կարելի չէ այսր դնել և հաւատ ընծայել ոչ մարդուս բնութեանը և ոչ նորա ամենահանդիսաւոր խոստումներին, եթէ երկուսն էլ չեն ամրապնդած և պայմանաւորված սովորութիւնով։ Էպիքնիցը մարդուս մտածածի, խօսածի և արածի, միով բանիւ բոլոր կեանքի երեք քարտորդը սովորութեանն է վերագրում ։ Իսկ եթէ Բէկոնը մի տեղում ասում է, թէ, "Մարդուս մտքերը և այլ գաղափարները կախուած են նորա հակումներից և ճաշակից, խօսակցութիւնը — դիտունութիւնից և վարժապետներից, որոց մօտ ուսում է առել, և այն կարծիքներից, որ նա ընդունել է, բայց թէ գործը կախուած է միմիայն սովորութիւններից — ապա ուրեմն սովորութեան ասպարէզը այսպէս միմիայն գործնական կեանքի մէջ սահմանափակելը սխալ է, որովհետև Բէկոնը ուշադրութիւն չի դարձրել կոնտեն, ճաշակ, ոճասեռ, կոմպիլ բառերի իմաստին. ասպա թէ ոչ նա, անկասկած, կընկատէր, որ այս բոլոր բաների մէջ որ նա հարկաւորում է սովորութեանը, դոյն այդ սովորութիւններն և

ընտելմունքներն են առաւելապէս, թէև ոչ բացարձակապէս, դէր խաղում։

Եթէ սովորութիւնը պատճիսի ընդարձակ ասպարէզ է ներկայացնում, ապա ուրեմն ի՞նչ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ նա մարդուս բոլոր կեանքում, թէ բարոյական և թէ մտաւորական կողմից։ Խորամիտ Հնաբանները, որ ամենից լաւ էր ճանաչում մարդկային հոգւոյ բոլոր շարժուածքները, ասում է, թէ սովորութիւնը երբեմն մի հրդեհ է, որ լափում է մարդուս զգացմունքները, և երբեմն նորա պահապան հրեշտակն է լինում։ Եւ իրաւ, մարդկային բնաւորութեանց բոլոր պէսպիսութիւնը դիտելով՝ մենք նկատում ենք, որ բարի սովորութիւնը մի բարոյական հիմնաքարն է մարդուս համար, որ աճում է անդադար և որոյ տոկոսքներով շահվում է մարդս բոլոր իւր կեանքում։ Սովորութեան հիմնաքարիս, ինչպէս էլ որ դրամական հիմնաքարը տնտեսական ասպարէզում, աճում և բազմանում է գործածելուց և միջոց է տալիս իւր տիրոջը առաւել և առաւել պտղաբեր կացուցանել իւր ամենաթանգագին ըօրութիւնը՝ գիտակցական կամքի ոյժը։ Ընդ սմին նա կարող է անդադար և առաւել ու առաւել բարձրացնել իւր կեանքի բարոյական շինուածքը, կարիք չունենալով ամեն անգամ սկզբից սկսել նորան և ի զուր վճռել իւր գիտակցութիւնը և կամքը այն դժուարութիւնները յաղթելու համար, որոնք մեկ անգամ արդէն յաղթուած են եղել։ Առնենք օրինակի համար մի ամենահասարակ նորվորութիւն, այնէ կարգ ու կանոն պահելու սովորութիւնը, ինչպէս սեպհական նիւթերի դասաւորութեան, նոյնպէս և սեպհական ժամանակը կարգաղրելու վերաբերութեամբ։ Ա՛յն մարդը, որի համար այս սովորութիւնը գարձել է մի հարկաւորութիւն, բայց և անգիտակցաբար կատարելիս հարկաւորութիւն, որքան ոյժ և ժամանակ է պահպանում ի զուր կորցնելուց. որովհետև նա հարկադրուած չէ ամենայն րոպէ դառնալ դէպ ի իւր գիտակցութիւնը կարգ ու կանոնի հարկաւորութեան մասին, և բռնաբարել իւր կամքը յիշեալ կարգ ու կանոնը իւր կեանքում մտցնելու և հաստատելու համար. այսպիսի մարդը միանգամայն ազատ ունենալով կարգ պահելու հարկաւորութեան մէջ իւր այս երկու ոյժը, գիտակցութիւնը և կամքը, կարող է գործադրել նոցա մի առաւել կարևոր բանի։

Բայց եթէ լաւ սովորութիւնը բարոյական հիմնադրութիւն է, ապա ուրեմն և վատ սովորութիւնը, նոյնպէս և նոյն չափով, չը հաստատած բարոյական պարտ է, որ իւր անդադար աճող տոկոսիքներով կարող է տանջել մարդուս հոգին, փճացնել և ի դերև հանել սկզբից և եթէ բոլոր նորա գեղեցիկ սկսուածները և հասցնել վերջապէս նորան բարոյական անանկութեան։ Քանի՜ գեղեցիկ սկսուածներ և որքան գեղեցիկ մարդիկ փճացել են վատ սովորութիւնների պատճառով։ Դժուար չէր լինելու վատ սովորութիւնից ազատուիլը, եթէ միայն բաւական լինէր գործ դնել իւր վերայ թէ և ամենամեծ ոյժ, բայց թէ միանգամից արմատահան լինէր վատ սովորութիւնը։ Մարդս ուրախութեամբ կտրել կտար իւր ձեռքը կամ ոտքը, եթէ մի և նոյն ժամանակ կարողանային կտրել նորանից նորա բոլոր կեանքը թունաւորող վատ սովորութիւնը։ Բայց բանն էլ այն է, որ սակաւ առ սակաւ և կամաց կամաց արմատացող սովորութիւնը արմատահան է լինում, նոյնպէս սակաւ առ սակաւ և երկարատև պատճառներից յետոյ։ Մինչդեռ կենդանի է մարդս, նա կարող է միշտ փոխուել և բարոյական անկման ամենախորը վիհից բարձրանալ բարոյական կատարելութեան մինչ ամենավերին աստիճանը։ Մարդկութեան այս համոզմունքը քրիստոնէութեան պատուէն է, որ ազատելով նորան ժառանգական մեղքից և հիներու անբողոքելի և անկերծանելի բաղդից, տուեց նորան անձնական ազատութեան մեծ և կենսական սկզբունքը։

Իսկ որ ինչ վերաբերում է սովորութեան նշանակութեանը ուսում առնելու մէջ, այս այնքան պարզ է, որ աւելորդ է մինչև անգամ որ և իցէ երկարաբանութիւն։ Հայ մի այնպիսի գիտութիւն, որի մէջ սովորութիւնը պիտաւոր դեր չը լինէր խաղում, օրինակի համար մանգաղը, խօսելու, կարդալու, գրելու, հաշուելու, նկարելու և այլն և այլն գիտութիւնների մէջ։ Մինչև անգամ այնպիսի գիտութիւններ, որոնց համար հարկաւոր է ամենազարգացեալ գիտակցութիւն, կաղ ի կաղ պէտք է գնային առանց սովորութեանց. ղորօրինակ մաթեմատիկայի մէջ սովորութիւնը շնչին դեր չէ խա-

ղում. Եթէ մեզ հարկաւոր լինէր ամէն անգամ մտաբերել, թէ 2 անգամ 7 հաւասար է 14 ին, ապա սաստիկ պէտք է խանդարէր այս բանը մեր մտաւոր հաշիւներ անելուն. բայց սովորութիւնը հասցրել է մեզ այն աստիճանի որ երկու անգամ եօթը ասելիս, մեր լեզուն իսկոյն և նմա տասանում է, իսկ ձեռքը դրում «քսանչորս»։ Ամէն արուեստանոց մէջ, բաւ գրկիս ձեռքի տակ ամէն շարժուածքի մէջ ամէն արուեստի մէջ սովորութիւնը իւր նշանաւոր մասն ունի. անկարելի կը լինէր մեզ մեր մտքերը յայտնել, եթէ անդադար հարկադրված լինէինք մտաբերելու, թէ ինչպէս պէտք է շարժինք լեզուն և շրթունքները այս կամ այն գաղափարը յայտնելու համար։ Ամիներով պէտք է դրէինք մի չէչին նամակ, եթէ ձեռքը ինքն իրան չը շարժուէր ամէն մի տառ գրելիս, այլ պահանջէր մեզանից զանազան մտաբերութիւններ։ Թէ մինչև որ աստիճանի են հասնում ձեռքի սովորութիւնները, դեղեցիկ օրինակ կարող է լինել այն բանը, որ երբ մարդս մոռանում է, օրինակի համար, թէ այսինչ բառի մէջ ո՞ր տառը պէտք է գործածել, — թէ է, այն ժամանակ բաւական է շտապով և առանց մտածելու դրել նոյն բառը և ձեռքը ինքն իրան կը վճռէ մեզ այդ հարցը։ Այսպիսի հազարաւոր օրինակներ կարելի է ցոյց տալ բոլորն էլ այն եզրակացութեան կը բերեն, որ եթէ մարդս ընդունակ չը լինէր սովորութեանց, ապա և կարող չէր լինի ոչ մի քայլ յառաջ գնալ իւր զարգացման մէջ. որովհետև ամէն քայլափոխում նա պէտք է պատահէր հազարաւոր դժուարութիւնների, որոնց աննշմարելի կերպիւ յաղթում են սովորութիւնները, ազատ կացութեանելով մեր միտքը և կամքը նոր գործերի և նոր յաղթութիւնների համար։ Բերենք էլի մի օրինակ, որ ցոյց է տալիս, թէ սովորութիւնը հեշտացնում և թեթևացնում է մարդուս յառաջադիմութեան ճանապարհը։ Եթէ մարդս հարկադրուած լինէր ամէն քայլափոխում այնքան շատ գործածել մանդալու սաստիկ դժուարութիւնները յաղթելու համար, որքան գործ է ածել նա երեխայութեան ժամանակ, ապա ի՞նչպէս կապուած և կաշկանդուած պէտք է լինէր նա, ուրեմն և ո՞րքան յետ պէտք է մնար իւր յառաջադիմութեան մէջ. սովորութեան շնորհքն է միայն, որով նա ման է գալիս առանց նշմարելու և զգալու այնպիսի դժուարութեանց, որոնք հազիւ թէ կարող էր յաղթել անբան կենդանին, եթէ որ նա ի լուր չէնենար այդ ընդունակութիւնը։ Ահա ուրեմն ինչ պատճառաւ այն դաստիարակութիւնը, որ անուշադիր թողնէր աշակերտներին օգտուէլ սովորութիւններ հաղորդելու հարցը, և աշխատէր միմիայն նոցա մտաւորական զարգացման մասին, կը զրկէր անշուշտ նոյն զարդացումը այլ ուժեղ միջոցից, որ ներկայացնում են մեզ սովորութիւնները։

Անգղիացիք իւրեանց դաստիարակութեան մէջ, առաջին տեղն ընծայում են լաւ լաւ սովորութիւններ հաղորդելու խնդրին։ Կրթութեան հիմնաւորութիւնը, ասում են նոքա, սովորութեան յարգանութեան մէջն է պարունակվում։ Եւ իրաւ, ինչպէս որ ուսումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ. գաղափարներու հաղորդութիւն, նոյնպէս և կրթութիւնը — սովորութիւններ յատկացնելն է. և քանի ուժեղ են արմատացնում մարդուս բնաւորութեան մէջ լաւ լաւ սովորութիւններ, նոյնքան հաստատահիմն է և նորա կրթութիւնը, և սորա վերաբերութեամբ դաստիարակի ձեռքին, ուժեղ գործիք են ուսումնարանները, ուր սովորութեան հետ միատեղ ներգործում է և օրինակը։ Եթէ սովորութիւնը, ասում է Բէկոնը, այնքան իշխող է իւրաքանչիւր անհատի վերայ առանձին, ապա ուրեմն անհամեմատ ուժեղ պէտք է լինի նորա իշխանութիւնը մարդուս վերայ, երբ նա կապակցուած է միւսների հետ ի մի ընկերութիւն, կամ հասարակութիւն, ինչպէս և զօրախումբերում, ուսումնարաններում, մենաստաններում և այլ այնպիսի պայմաններում։ Այսպիսի պարագաներում օրինակը ինքը ուսուցանում է և ընթացք հաղորդում. ընկերակցութիւնը օգնում է և այժ տալի, նախանձաւորութիւնը զրգռում է և զրդում. վերջապէս և մեծարանքը ազնուացնում է հոգին և գեղեցիկ ձգտումներ հաղորդում, այնպէս որ՝ այս բոլոր բարեպատեհ պարագաներից ի միասին սովորութիւնը առաւել և առաւել ուժեղանում է և իւր վերջին ծայրին հասնում։ Միանգամայն ուղիղ և հասկանալի է այս, որովհետև եթէ սովորութիւնը և օրինակը միատեղ և յօգուտ միմեանց են ներգործում, ապա և հանդիսա ոչ մի զօրութիւն կարող չէ մնքառել նոցա դէմ։ Ահա ինչ

պատճառաւ, օրինակ, այն կրթարանները, որոնք հաստատ լինելով միշտ և անընդհատ մի վաղուց որոշեալ ուղղութեանը և ոգւոյն, մի և նոյն ժամանակ և անփոփոխելի են իւրեանց գործողութիւններում, աներկրայելի և հաստատուն իւրեանց պահանջմունքներում։ Այսպիսի կրթարաններին, ասում եմ, յատկացեալ է անշուշտ այն դաստիարակական ոյժը և ազդեցութիւնը, որ ունին Անգղիացւոց և Ամերիկացւոց ուսումնարանները և որին զարմացած է մնացել անդրդջ Եւրոպան։

Ն. Աճեմեանց։

Ս Պետերբուրգ։

ՃՈՐԴՈՐ։

Ի ՍԷՐ ԱԶԳԱՑԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Անտարակոյս եմ, թէ իւրաքանչիւր բարեմիտ անձն կը հաւանի, որ այսօրուան լուսաւորեալ ազգերը միայն մարդկութեան, մարդասիրութեան բարձր աստիճանին, և հետևաբար երջանկութեան հասած են, որոնց մայրենի լեզուի գրականութիւնը օր ըստ օրէ հնոյապարար յառաջ կ՚գիմէ ճոխ և ամենեցուն հասարակաբար հասկանալի գիւրին ոճով. և այս ամենահարկաւոր առարկայն է եղել մինչ ցայսօր առաջին և ամենագլխաւոր միջոցն դէպ ի լուսաւորութիւն, դէպ ի նորանոր գիտութիւններ և առողջամիտ հասկացողութիւններ յառաջ գնալու։ Ամենայն մի լուսաւորեալ ազգի մէջ բարձր արձանի նման կանգնած է այս անհերքելի ճշմարտութիւնն, թէ ամենայն մի անհատ սրբազնագոյն պարտք պէտքէ համար է իւր մայրենի լեզուի ոգւոյն տիրել որքան որ կ՚զօրէն նորա հոգեկան կարողութիւններն. որպէս զի այնուհետև օտար լեզուների ուսմամբ գրականութեան մէջ կարողանայ անսայթաք յառաջ գնալ առաջնորդ ունենալով ինքեան իւր ազգի գրականական ամրապինդ դաւազանը, որպէս զի կարող լինի իւր ազգութեան նկրքին սահմաններն թևակոխել, ճանաչել քաջապէս թէ ո՞ր աստիճանի վերայ կանգնել է իւր ազգային լեզուի գրականութիւնը, թէ արդեօք կ՚բարձրանայ այն՝ նոյն աստիճանից, թէ ընդհակառակն նկրքև կ՚իջանէ, և վերջապէս ճանաչել ինքն իրան՝ ուրիշներին ուղղակի ճանաչելու համար. և ամենայն մի լուսաւոր ազգն այս ճշմարտութեան սրբազան յարդը գիտելով, յատուկ կ՚քայլափոխէ զայն ինքեան միայն ունենալով ուղեցոյց դէպ ի լուսաւորութիւն. և եթէ սրատես աչօք նկատենք, կ՚տեսնենք, որ չկայ մի այնպիսի ազգ, որ լուսաւորութեան, այն է՝ բարոյական և նիւթական երջանիկ վիճակով փայլի, եթէ նորա գրականութիւնը ճոխաբար և արագապէս յառաջ չի ընթանալ դէպ ի կատարելութիւն. չկայ այնպիսի ազգ մի, որ համազգային բարօրութեան հասած լինի, և ուշադրութիւն և հետաքրքրութիւն զբաւած լինի իւր վերայ, եթէ չունի իր սեպհական լեզուն և հետևաբար գրականութիւնը։ Այս ճշմարտութիւնը և մեր Հայկեանս ազգի մէջ ճանաչուել է այո և ամենայն մի անհատ պարտաւոր է աշխատել սորա վերայ կանգնելու իր գիտութեան հիմն, զի առանց այս հիմնան անհաստատ է ամենայն մի գիտութիւն. և ո՛ և իցէ լեզուագէտ անձն եթէ ծանօթ չէ իւր մայրենի լեզուի նորքին ոգւոյն, անկարծիք նորա գիտութիւնը արմատական չէ, և նա ինքն էլ ճանաչելով այս անուղղելի պակասութիւնը, աւաղ կը կարդայ իր վերայ։ Հանգիստ սուրբ ոսկերաց մեր մատենագիրների, որոց ճիգը եղաւ Հայոցս գրականութեան գլուխը պսակել գրաննայ պսակներով. այո անմոռաց կ՚մնան ամենայն մի հայագէտ սրտից մէջ Խորենացւոյ, Եղիշէի, Լամբրոնացւոյ, Շնորհալւոյ և այլոց մեր հոգելից վարդապետների անունները, զորոնք մի առ մի թուել կարիք չկայ այստեղ, հաւատալ լինելով թէ իւրաքանչիւր հայի ճիգն եղած լինի գրկել Հոգւոյ մէջ այն Սրբազան Մատենագիրների անուններն և աւանդներն, որոնք Հայկական գրականութեան պարտիզի մէջ որպէս անուշահոտ վարդեր և շուշաններ են հանդիսացել, և միով բանիւ զնեղկաղարդ գարնան բազմազեղուն, ախորժելի և օգտաւէտ պտուղներ։ Ամենայն մի ազգի նշանակութիւնը կ՚որոնուի իր գրականութեան հետքերի մէջ. ամենայն մի ազգ կ՚պարծի իր գրականութեամբ. և աւելի ևս պարծանաց և ուշադրութեան արժանի լինելու և իրական երջանկութեան տարրը ընդունելու համար. կ՚աշխատի օր քան զօր ճոխացնել նորան հարուստ և գիւրահասկանալի ոճերով. ուստի և ահա այսօրուան օրս լուսաւորեալ ազգաց անուններն անդամ պատկառելի են ամենայն մի

պղծի մեռ, վասն զի նոցա գրականութեան շահը կ՚փայլի մշտապայծառ լուսաւորութեամբ, վասն զի նոցա դիսաւոր ջանքն և ճիգն է իւրեանց մայրենի լեզուի երկնապարգև ներշնչութիւնն ընդունել և մշակել։ փառք սուրբ նշխարաց մեր երանելի վարդապետներին, որ որպէս անմահ մեծագործութիւներ Թողին յետնոցս աւանդ Հայկական գրականութեան պարունակող մատեաններն։ Ամենայն մի Հայազէտ օտարազգի ուսումնականի ծանօթ են մեր հոգելոյս մատենագրիներուն սուրբ անուններն և մատենագրութիւնները. կ՚ընթեռնուն նոքա անդադար հետաքրքիր աշխուժով. և նոցա արժանաւայել գործոց նշանակութիւններն ճանաչելով՝ նոքա ևս կ՚կրկնեն հանդիսաստ ձեզ։ Եթէ Հայկական գրականութիւնը արժանի է գովեստից և ուշադրութեան օտար ազգերին, և նորա քաղցր ճաշակն մեզ Հայոցս քմբերին զմայլումն կ՚բերէ, և երկնային մանանայի պէս կ՚յագեցնէ զմեր հոգին, և միանգամայն ուրիշ գիտութիւններ ճաշակելու ոյժ և աշխոյժ կ՚տայ, և եթէ ջանալով գործունէութեամբ միայն կ՚հասանի ամենայն մի ժողովուրդ լուսաւորութեան, և նորա ընթացքը դէպ՚ի գիտութիւնն անսայթաք է և ուղիղ, եթէ ունի նա ջանակուռ և անձնազոհ մեծագործ անձինքներ այս սրբազան առարկայի յառաջադիմութեանը համար աշխատող, և մեզ [Հայերիս դէպ՚ի գիտութիւն տանող ճանապարհներն ունին ուղիղ շաւիղներ. ուրեմն չ՚դանդաղինք, ոչ՛ եղբայրներ, մեր մայրենի լեզուի սրբութիւնը իրական կերպով պաշտելու. չ՚նայինք անտարբեր սրտիւ լուսաւոր ազգերի յառաջադիմութեանց վերայ. գոն գործենք ոչ միայն անուամբ Ազգութեան սուրբ պարտքն անվճար Թողնելու, այլև գործնական կարողութեամբ փութանք մեր ճոխ գրականութեան պարտիզին մէջ աշխատելու, որպէս զի կարողանանք տիրել մեր մայրենի լեզուին նոյն պարտիզի քաղցրաճաշակ պտուղներուն վայելման յոյսով։

Յովհաննէս Մուղնեցի։

Ա.Ղէոնդեան։

ԳԱՐՈՒՆ

Իանց ձմեռն և ցրտութիւն՝ մեզ մառախուղն շուտափոյթ,
Առուաց պաղիլ էանց ահա և բարդիլ ձեանցն կոյտ՚ի կոյտ.
Խռովարար հողմք սաստկաշունչ և ամպք մթին ձմերան,
Ցրտատատսուռ բուքք մարդախեղդ անցին՚նդ աւուրց տխրական։

Արդ ժամանեաց մեզ ճոխ գարուն զեփիւռն զմեզք առնու պար,
Ծիծաղադէմ ոսկեզնակ փաղփի արփին յիւր կամար.
Արծաթաւիալ սահին առուակք և խոխոջեն ջինջ աղբերք.
Մեղրամակարդ ծաղկամիք պճնին Դաշտք և Հովիտք բարեբերք։

Քաղցրաղբուցիկն ահա Սարեակ՝ տեսէք զինքն զեղգեղէ.
Մինչ զի զսիրտ և զմիտ մարդկան՝ ահ՚ի զմայլիւ արկանէ.
Սիրանուաղն սիրուն Սոխակ ընդ Թուփ ընդ ծառ և ծաղիկ,
Անդուլ երգօք զիւրն որոնէ զսիրելին վարդ փափկիկ։

Զայնք կաքաւուց և՚ի հովտաց արձագանգեն համակ խինդ,
Խումբք ճնճղկաց ընդ ճիղ ծառոց ճռուտղեն յար Թինդ՚ի Թինդ.
Աշխատասէր և գունդք մեղուաց տղզան բղզան՚ի ծաղիկ,
Շաքարածուծ ծծել զհիւթ՚ի նիւթ մեղրից անուշիկ։

Տեսէք որպէս քաղցրիկ մայէ չքնաղ գառնուկն՚ի դաշտին,
Եւ աշխուժիւ հովիւըն քաջ սուլէ սրիւնգն մեղմագին.
Բառանչք եղանց՝ խրխինջք ձիոց ընդ բզուրս ընդ հովիտ,
Որպէս առնեն համակ ունկանց ուրախասառն լսելիս։

Զարմանք տիրէ ինձ պկռվին՝ թէ մերկանդամ ծառք պնարդ,
Ի մերկ յոստոց կանաչեցեալ զարդարեցան գեղազարդ.
Ո՞ հաւատայր տղեղադէմ և դոսացեալ բոյսք և տունկք,
Շքեղ այսպէս փառազարդիլ զերծ յայլինեան ծառատունկք.
Ցարդ իշխէր մեզ Հողմ բքարար և ցուրտն ձմերան զառնաշունչ,
Ահա զեփիւռն մեզ զովափիւռ հնչէ խաղաղ կենսաշունչ.
Արդ հաշտութիւն. արդ քաղցրութիւն. արդ սէր ծաւալ ի բնութեան,
Ցամենեսին համատարած խաղայ խնդանք բերկրութեան.
Ո՜վ. արդարև մեծ ես դու Տէր՝ դու և առնես սքանչելիս.
Զանյուսալին պճնես ի գեղ և ի կարգս ի բարիս,
Զի ի կամաց քոց միմիայն կախին ընութիւնք ամենայն.
Որպէս կամիս նոյնպէս շարժին զի հպատակ տեառնդ կան.
Ա՜ռ. Հայկազանցս Տէր, թո՛ղ աշխարհ զերծ պերճ զարուն նորասքանչ,
Քեզ նորագեղ բարեկարգեալ գայցէ յերես ճոխասպանծ.
Տե՛ս՝ որպիսի՛ նախատեն մեզ արք փանաքի չարասէր . . .
Եւ զրացիք ծիծաղին ըմեօք՝ ծառայք յառնեն ընդդէմ մեր.
Նորակրօնք եղեալ են գայք գառնագգեստ ձևացեալ,
Հնչեն ի մեզ հոգեսառսուռ հողմք թիւր ոսմամբք շաղաղեալ.
Որով և սիրտք մեր ի միմեանց պաղեցուցեալ սաստկապին,
Տիրեն մեզ հեռք ատելութիւնք և անջատումն զառնագին.
Վ՜աւնորոյ Տէր՝ դու յարուցեալ զթայ յաղգս Հայկազեան,
Զի ժամանակն արդ գթալոյ հասեալ է ժամն իսկական.
Քաղցրահայեաց երևեցո՛ արփիագեղ դէմք քոյին,
Ամեհնացեալ սառնասառոյց . . . թշուառակիր աշխարհին.
Ի՞ջ ջերմիւ անել արիւտյդ սառնամանիք մեր սրտից,
Գէթ հալելով և ի հոգւոյդ հնչեսցէ սիգ զովալից.
Որով մնաց մեր անդաստանք ծաղկօք ոսման պճնեսցի,
Եւ սէր անկեղծ հոգեպարար ի հոգիս մեր տպեսցի.
Եւ երբ այսպէս յեղաշրջեալ անիւք ամաց բարեբաստ,
Գարուն էքնաղ գառնայ ի մեզ՝ հողմք լռեսցին չարասաստ.
Ի հայրենիս հարազատք մեր եկեալ սիրով անկասկած,
Ո՛՛՛ միաբան յայն վէմ գարնան տացուք փառս քո՛ղ Աստուած.

Գ՜ԷՒՂՈՐ Ո–ՐԱՐԱՒԵՐ Ա՜ՊՈՂԵՈՒԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ո՛չ մէկ մոլութեանց չաստուածն չունի աշխար հիս վերայ այնչափ երկրպագուք և խնկարկուք, որքան որ այս երկու պիսաւոր ախտից աստուածուհիներ, ամէն տեղ սոցա համար փառաւոր մեհեաններ, ամէն տեղ սոցա բարձրաբերձ բագիններ, ամէն քաղաքաց և գիւղից մէջ սոցա համար երդեցիկ գուսաններ և մարդապետներ պատրաստ են։ Քրիստոնէութիւնն, ոի իւր կենսաբեր վարդապետութիւններով կռապաշտութեան դէմ այնչափ պատերազմեցաւ, կռատունները տապալեց և կռա-

պարիշտները ի լոյս Աստուածգիտութեան վերա-
ծեց, տակաւին չկարողացաւ այս երկու անդուլ
Աստուածուհեաց վերայ կատարեալ յաղթանակ
կանգնել, և սոցա արբանեակներ՝ բոլորովին աշ-
խարհէս ջնջել. Շրջիր փողոցները, ամենէն աւելի
սոցա աշակերտեալք կ'տեսնես. Մեծի վաճառա-
նոց, ուր կ'տեսնես այս արիւնարբու Աստուածու-
հիքը յաղթական դրօշ ձեռքերնին կանգնած, առ-
ևտրական անարատ հաշուոց մէջ իրենց խարդա-
խութեան որոմն ցանելով, անդադար կ'խրախու-
սեն իրենց անթիւ ախոյեանները. որք ի պատիւ
սոցա կ'պատերազմին եղբայր՝ եղբօր, բարեկամ՝
բարեկամի, որդին՝ հօր, և ծառայն՝ տիրոջ դէմ.
Գնա մեծ համարիւն սիրասուն գերդաստանի մէջ.
կ'տեսնես այն տեղ, որ սոքա զահագլուխ բաղմած,
անմիաբանութեան չարագուշակպատգամներ կար-
ձակեն. բարեմիտ և խաղաղասէր ընտանիքը
խռովութեամբ կ'լեցնեն. իրարու դէմ կ'յա-
րուցանեն, և նախանձելի միութիւն քայքայելով
տունը կ'կործանեն. Մինչդեռ՝ համասեռ մարդկային
ազգն, կ'տեսնես որ սոցա թելադրութեամբ մի-
մեանց դէմ հուր կ'փայլատակեն, սուր կշողացնեն,
որոգայթներ կ'լարեն, անմեղաց արեամբ գետինը
կ'ոռոգեն. Սոցա համար ջերմեռանդ հաւատարիմ
պաշտօնեաներ կ'հանդիսանան Ատիլլաններ, Ջին-
կիզխաններ, Տուղրիլներ և Լէնկթեմուրներ, որոնք
բոլոր աշխարհը այս ոխերիմ Աստուածուհեաց
զոհելու իրենց բոլոր ճիգն թափեցին. Երանի՜ թէ
մեր Ազգային պատմական էջերն ևս չներկայացնէին
սոցա արբանեկաց անունները. բայց՜ աւա՜ղ կ'տես-
նենք Մհերուժաններ, Վասակներ և այլ այսպի-
սիք, որոնք՝ իրենց համազգեաց արեամբ հաւատա-
րիմ ծառայութեան անթերի պարտք հատուցին
այս երկու այլանդակ ճիւաղաց. Եւ որ աւելի ցա-
ւալին է, իններորդ դարուն Հայաստանն սոցա զո-
հագործութեան բազին մը դարձաւ իրենց ընտիր
ախոյեան Գագիկ Արծրունեցին առաքինորդութեամբ.
որոյ յիշատակն սարսուռ և կսկիծ կազդեն տակա-
ւին ղպայուն Հայկազանց սրտերը. Եթէ աշխարհը
շրջիս, կ'տեսնես վանօրէից, հին մայրաքաղաքաց,
աւանաց և գիւղից աւերակներ, որոնք մեծաւ մա-
սամբ այս մարդասպան տիրապետաց զոհ եղած են.
Գնա պատերազմի դաշտը. կ'սարսափիս, տեսնե-
ով որ, ի սպաս փառաց Աստուածուհեացս՝ կ'տե-
ղան նետեր, կ'որոտան թնդանօթներ, կճռճան
նիզակներ և կարձակուին հրացաններ, որով թա-
ւալգոր կ'խաշան անթիւ մարդազոհեր, որոց ծուխ
բարդ ի բարդ կ'ծառանայ ի հոտ անուշից այս եր-
կու մարդասանձ անագորոյն բռնաւորաց. Եթէ
սարսափ պատեցին քեզ այս ահաւոր տեսարաններ,
ապա ո՛ր աստիճան սոսկումն, դողումն և զարմանք
պիտի պաշարեն քո սիրտը, երբոր մտնես Ամենա-
կալին Սրբազայր նուիրական Տաճարը. ուստի թէ
և հանապազ կ'որոտան սոցա դէմ Աստուածատաց
շանթեր և կայծակներ Առաքելական և Մարգա-
րէական ընթերցուածներէն և Հոգելից քարոզչաց
և Աստուածաբան վարդապետաց բերաններէն,
բայց սոքա անամօթ և անպատկառ, կարհամար-
հեն այդ սոսկալի վտանգները, ներս կ'մտնեն, նոյն
իսկ իրենց թշնամիներէն և նոցա պարագլուխներէն
իրենց մահագուշակ կրից այսինքն խռովութեան,
տեղութեան, նախանձու, գայթակղութեան և
մեղկութեան պաշտպաններ կ'գտնեն. և Աւետա-
րանն սուրբ, որ իրենց դէմ մահացու զէնք մի է,
իրենց մոլեղնութեան գործիք անելով, կուտան
սոցա ձեռքը. որով գլխաւորութեան, անսխալու-
թեան, իրաւասութեան և բանալեաց ժառան-
գութեան խնդիրներ և կրօնական տարակարծիք
վէճեր յարուցանելով, իրենց դէմ պատերազմի
վճռավայր տեղը, իրենց յաղթութեան հանդիսա-
րան կ'դարձունեն. Աւելի պարզ ասելով, այս խո-
րամանկ Աստուածներէն յորդորուելով՝ ինչեր
չ'գործեցին Ջիզվիթներ ի միտս մարդկութեան և
լուսաւորութեան. Սպանիոյ մէջ այն զարհուրելի
Ափդց տափէն առ ի՞նչ կ'պատրաստուէր. Թա-
գուհիք Եւրոպայ. Հայաստանի մէջ, Ունիթորաց,
այն կրօնաղեղծ որսորդաց սոսկալի խռովութեանց
և ազգաւեր դաւաճանութեանց նպատակն ի՞նչ
էր. Ի՞նչ չարիքներ մեացին, որ չ'գործեց անիծա-
պարտն Նիկոլ՝ Լեհաստանի մերաձնէից դէմ. որոց
ազգութիւնը կորստեան մատնելու պատճառ դար-
ձաւ ի պատիւ անձնական փառասիրութեան և
շահասիրութեան. Այս այսպէս այժմ ցաւօք սրտի
դուրս եկ Եկեղեցիէն՝ մեր Դպրոցը, այս հա-
ւատարութեան՝ առաքինութեան և լուսաւորու-
թեան գործարանը, ուր այս չաստուածուհեաց ըս-
պանման համար մեաւոր զէնքեր կ'պատրաստուին,
մանկական բերաններ կ'գոռան, սոցա դէմ մահ

կ'սպառնան, նոցա ձեռքեր բարոյական սրեր կ'սրեն, սոցա կորստեան համար որոգայթներ կ'լարեն. բայց ի՞նչ անես, այստեղ դիւրաւ մուտ կ'գործեն այս մեր գաղտագողի աղաւէսնիք. իրենց համար հաւատարիմ՝ արբանեակներ կ'գտնեն նոյն իսկ Դպրոցական պաշտօնեաներ, նոցանից ամենէն առելի յարգանք կ'ստանան, նոցա ձեռքը այդ լուսավայր գործարանը հիմն ի վեր կ'տապալեն. որոց աւերակաց վերայ սոցա յաղթութեան դրօշն կ'կանգնի: Ա՛յլ ևս ի՞նչ երկարեմ. ասածներէս կարծեմ բաւական կ'ապացուցվի թէ՝ այս երկու պլսաւոր ախտեր ինչպէ՞ս հաստատուն տիրապետութիւն ստացած են մարդկային ընութեան վերայ. և որչա՜փ չարիքներով լցուցած են թէ հին և թէ նոր աշխարհը իրենց աշակերտելոց ձեռքով. որոց համար լաւվ ասէր Առաքեալն "իբրև զթշնամեայ խաչին Քրիստոսի":

Ա՛յս աշխարհակործան լծակից հարազատներ ունին իրենց համար և տարբեր արբանեակներ, որոց առանձնական չարիքներէն աւելի նշանաւորաց համար նաև պարտք կ'համարիմ որոշ համառօտ յօդուածով մի խօսիլ:

Մ. Պալեան

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳՐՈՑ

ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ընթացք ամառայրոյս ներկայ թուոյ երկրորդ շրջանը աւարտեալ լինելով, Խմբագրութիւնը կը փութայ յայտնել և միանգամայն խնդրել իւր Ընթերցասիրէն, որպէս զի օր յառաջ իսկահաճին առնէ Հայրենական քաղաքներուն Տպագրանական ժողովոյ կողմանէ նշանակուած գործակալաց կանխիկ վճարել ըստ ռուբլի բաժանորդագինները ամառայրոյս երրորդ շրջանին համար՝ իւրեանց Հաստէքէ հետ ի միասին:

Սոյն ամառայրոյս սիրելի Ազգայնոց մէջ գտած համակրութիւնը և ընդունելութիւնը խթանուած է՝ մանաւանդ պարտաւորած գնորդութիւն սորին՝ մի և նոյն գնով (4 ռ.) բայց փոխանակ երեքի՝ ըստ թիւրթով և երբեմն (անցեալ տարուան պէս) յաւելուածով հրատարակել. Ամառայրը:

Ընդունելի եմք, որ մեր սիրելի Ազգայինք՝ խմբագրութեան այսպիսի անօրէնութենէն զոհ և ուրախ զգացմանց՝ ենթարկուելով, յառաջակայում առաւել և համակրութեամբ և ընդունելութեամբ մեծարած Ընթերցողը, նա և կրկին ալիսի քաջալերէ խմբագրութիւնը հետզհետէ ուրիշ կարևոր և օգտաւէտ փոփոխութիւնք յաւելացնելու:

Իսկ իւրաքանչիւր ամառայրներու՝ ի ժամանակին բաժանորդաց փութով հասուցանելոյ աղագաւ՝ Տպագրանական ժողովոյ ձեռք առած միջոցաց և կարգած գործակալաց ընորհիւ, կը յուսամք, զի այս առիթով պատահած դժդոհութեանց այլ և այլ տեղիք մնալու չէ: Գործակալաց անուանքը պէտք է շարունակ հրատարակուին Ընթերցասիրաց կողմի վերջին երեսում:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ